



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



N16.

6 NOV 2011

89.99  
5-27  
ար.

ԱՐԴՅՈՒՆԱԳՈՎՐԾԱԿԱՆ



# ԱԿԱՐԻԶ ԹԱՂՑԵԱԿԱ

Դրամա 4 գործողութեամբ.

(Արտասով. «ՄՈՒԽԻՇ» ամսագրից)

1961.

ԹԻՖԼԻԶ  
ԱՐԱԲԱՏԻՎ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՑԻ  
1903

24 JUN 2013  
1102-30

41954

Дозволено цензурою. Тифлисъ, 4 сентября 1903 г.



5435

38



ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԸՐԾՁԻՆ

Մի նախասենեակ, որի ճակատի դուռը բացւում է դէպի ընդարձակ դահ-

(Ներկայացուած է առաջին անգամ՝ Բագուի Հասարակական ժողովարանի դահլիճում 1903 թ. մայիսի 8-ին եւ կրկնուած նոյն ամսի 11-ին «Հանրամատչելի ժողովրդական ջուրաբութիւնների» թատրոնում):

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԻՒՔԱՑԼ, ԹԱՇՃԵԱՆ, ՆԿԱՐԻՀ.  
ՖԼՈՐԱ, նրա կինը.  
ԵՂԻՍՍԲԷԺԹ, նրա մայրը.  
ՎԱՀԱՆ, նրա եղբայրը.  
ԱՆՆԱ,  
ՎԱՐՍԵՆԻԿ,                   | նրա քոյրերը.  
ՍԱԹԵՆԻԿ,  
ՀԻՒՓՍԻՄԵԼ, Ֆլորայի մօտ աղգականուճին, կին-բժիշկ՝  
նորաւարտ.  
ՄԱՆԱՍԵԱՆ, երեսասարդ նկարիչ, Միքայէլի նախկին ա-  
շակերտը.  
ԲԺԻՇԿ, Միքայէլի լաւ ծանօթը.  
ԱԲԳԱՐ, Միքայէլի հօրեղբայրը, խոշոր առետրական.  
ՊԱՐՈՆ N.  
ՏԻԿԻՆ N.  
ԹՂԹԱԿԻՑ.  
ԿԱՍՍԻՐ.  
ԱՅՑԵԼՈՒ.  
ՕՀԱՆՆԵՍ, Վահանի ծառան.  
Պարոն N.-ի գործակառաբր:

Ψ Ρ Ι η Υ ι

Պէտք է աեղախովսել 20-րդ և 26-րդ երեսները, դնել 20-րդը  
26-րդի աեղ և 26-րդը 20-րդի աեղ:

բին) Հը՛, ինչպէս է գնում ձեր գործը:  
ԿԱՍ. Շատ վատ:  
ԹՊԹ. Այս:  
ԿԱՍ. Սոսկալիք անտարբերութիւն:  
ԹՊԹ. Ի՞նչ էք ասում:  
ԿԱՍ. Հաւատացէք:  
ԹՊԹ. Գիտէք ինչ: Ես կամենում եմ լրազրում մի յօդուած  
գրել Թաշճեանի պատկերների մասին:  
ԿԱՍ. Ինչու այդքան ուշ:  
ԹՊԹ. Մենք լուր տուել ենք իր ժամանակին:  
ԿԱՍ. Այս, մի քանի տող լուրերի բաժնում... Բայց գուք  
կարդացիք այս յանդուղն բեցենզենտի հայոյանքը մեր նկարչի  
մասին: Թաշճեանի պատկերները նա անուանում է «աշակեր-  
տական խճքանք»:  
ԹՊԹ. Դա մի անպատճառ յօդուած էք: Արմէ միթէ ու-  
շազրութիւն գարձնել:

ԿԱՍ. Բայց տեսէք, որ դրանից յետոյ յաճախորդների թիւը ինչքան նուռազեց:

ԹՂԹ. Թաշճեանը, երևի, շատ տիսրել է, հա:

ԿԱՍ. Այս, իհարեմէ: Անել գրութեան մէջ է... Պարտքերի տակ ձնչուած, յուսահատ...

ԹՂԹ. Ե՛ս, ցաւալին է, շատ ցաւալի:—Ես, յամենայն դէպս, մի յօդուած կը գրեմ:—Յ'անսութիւն: (Թղթակիցը գնում է: Դահլիճից զալիս է Միքայէլ Թաշճեանը, կասսիրը նրան յանձնում է մի այցուում):

### ՏԵՍԻԼ 3.

#### ՄԻՔԱՅԷԼ, ԿԱՍՍԻՐ.

ԿԱՍ. Զեր հօրեղբօրից:

ՄԻՔ. Իմ հօրեղբօրից: (Կարդում է) «Միքելի Միքայէլ»... Մինչեւ անգամ «ափելին»: (Նարունակում է կարդալ) «Յուցահանդէս փակելու ժամանակ ես պիտի զամքեղ մօտ հարկաւոր գործով, ինձ կը սպասես:—Սբգար թաշճեան»:—Հարկաւոր գործով—զարմանալիք բան: Բայց ինչ գործ, ինչ առնչութիւն կարող է լինել իմ և նրա մէջ, մի նկարչի և մի առհարականի մէջ: (Դահլիճի դրան մօտ երեւում են պարոն N. եւ տիկին N.)

### ՏԵՍԻԼ 4.

#### ՄԻՔԱՅԷԼ, ՊԱՐՈՆ N., ՏԻԿԻՆ N., ԿԱՍՍԻՐ.

Պ. N. Տիկինը շատ հաւանել է ձեր մի պատկերը: Ինչպէս է անունը...

Տ. N. «Բնութեան գրկում»:

ՄԻՔ. Յաջող ընարութիւն էք արել, տիկին: Դա իմ ամենալու պատկերներից մէկն է:

Տ. N. Հիանալիք պատկեր է, հիանալիք:

ՄԻՔ. (Գլխով շնորհակալութիւն է յայտնում):

Պ. N. Քանիսով կը տաք էդ պատկերը, որ առնենք:

ՄԻՔ. Գները նշանակուած են: Զեր ընտրածն արժէ 1200 րուբլի:

Պ. N. Ա՛ (Զարմացած նայում է կնողը):

Տ. N. Օ՛ (Նոյնպէս զարմացած): Ի՞նչ էք ասում, պարոն: Նա այնքան էլ մեծ չէ. աւելի մեծերը կան:

ՄԻՔ. Խնդիրը մեծութիւնը չէ, տիկին:

Տ. N. Բայց և այնպէս շատ թանկ է:

ՄԻՔ. Ո՛չ, տիկին, նա աւելի արժէ: Բայց ևս նկատի ես ունեցել մի հանգամանք. մեր մարդիկ դեռ սովոր չեն մի գեղարուեստական գործ ըստ արժանուոյն գնահատել:

Պ. N. Երկու հարիւր մանէթով չէք տայ:

ՄԻՔ. Դուք ինձ ծաղը էք անում:

Պ. N. Ինչո՞ւ, ես լաւ զին եմ տալիս:

ՄԻՔ. Ես սակարկութիւն չը գիտեմ:

Պ. N. Համաձայնեցէք, պարոն, համաձայնեցէք: Աւելի չարժէ:—Մի յիսուն էլ կ'աւելացնեմ:

ՄԻՔ. Դրանք աւելորդ խօսքեր են:

(Պարոն N. եւ տիկին N. խորհուրդ են անում. Միքայէլն էլ խոսում է կասսիրի հնոյ):

Պ. N. Կինս է շատ հաւանել, թէ չէ ինձ մնար, խոստովանք լինի, ես բաց աչքով հարիւր մանէթ էլ չէի տայ մի պատկերի: Տանը էնգան ունինք որ... Ամեն մի պատկեր է ծեփած: Բայց քանիսով առած լինինք լաւ է—10, 15, ամենաշատը 25 մանէթով. Աստուած վիայ, նչ աւելի: Եւ հասարակ բաներ չ'իմանաք. բոլորն էլ մեծ-մեծ, ահա էս մեծութեան, գեղեցիկ, ոսկի շրջանակների մէջ... Հապա:

ՄԻՔ. Դրանք ուրիմն իւղաների պատկերներ չեն, այլ հասարակ օլէօգրաֆիաներ:

Պ. N. Էլ չեմ իմանում, թէ ինչ են ասում, միայն շատ սիրուն տեսարաններ են... Հա, հիմի ինչ-որ է, խօսքը ձերի մասին է: Վերջնական գինը ասացէք, որ մեր առուտուրը գըլուի գայ:

ՄԻՔ. Վերջնական գինը ասուած է:

(Պարոն N. եւ տիկին N. կամացով խօսում են. նոյնպէս եւ Միքայէլը կասսիրի հնոյ):

Պ. N. Երեք հարիւրով էլ չէք տալիս:

ՄԻՔ. Պարոն, ես ձեր մատի վրայ տեսնում եմ մի մատանի, որի միայն ակը, երեխ, մի հազար արժէ:

Պ. N. Սրա ակը: Համար համար կախենում էք երկու հազար ատէք:

ՄԻՔ. Տեսնում էք, պարոն: Զեղ համար ոչինչ բան է եղած անչուշա մի երկու հազար բուբլի համրել ոսկերչի առաջ մի աղամանդի համար, որի վրայ մարդկային միայն ձեռքն է աշխատել. բայց ձեզ օտարուի, մինչեւ իսկ ծիծաղելի է թւում, երբ նկարիչը, իր երկարատե աշխատանքի փոխարէն, պահանջում է աւելի պակաս հաւատցում և տալիս է ձեզ մի պատկեր, որի վրայ նա իր միտքը և սիրան է զբեկ. որ:

մենքը խոստովանում են, և որք կարող էք նոյնիսկ իշխանական ապարանքի չքեզ զարդարանքը լինել:

Տ. N. Շատ ափսոս, որ դուք ոչինչ չեք կամենում դիշանել:

Միթ. Տիկին, ես մի ներկարար չեմ: Ես չեմ կարող ստորացնել իմ վրձինի նշանակութիւնը մինչ այդ աստիճան: Դուք մի այնպիսի գին էք առաջարկել, որ...

Պ. N. Ուրեմն չեք տալիս էլի:

Միթ. Անկարելի է:

Տ. N. (Փժող) Գնանք, հարկաւոր չէ: (Վերջնում է ամուսնութելը, եւ զնում են: Մտնում է այցելուն):

### ՏԵՍԻԼ 5.

ՄԻԹԱՅԷԼ, ԱՅՑԵԼՈՒ, ԿԱՍՍԻԲ.

Ա.Յ. Շնորհակալութիւնս եմ յայտնում այն մեծ զուարձութեան համար, որ ինձ պատճառեցին ձեր գեղեցիկ պատկերները: Մի քանիսն այնքան յաջողուած են, որ մարդ յափշտակւում է նայելիս:

Միթ. (Գլխով շնորհակալութիւն է յայտնում):

Ա.Յ. Հաւատացէք, պարսն թաշճեան, որ եթէ ես միջոց ունենայի, անպատճառ ձեռք կը բերէի ձեր պատկերներից զոնէ երկուսը—Յնութեան զրկում» և «Մասիս»: Դրանք գեղարուեասական գլուխ-գործոցներ են:

Միթ. Ի՞նչ արած: Այդ էլ իմ բախտից: Ունեորը խնայում է, չունեորը՝ անկարող:

Ա.Յ. Սրտանց ցանկանում եմ յաջողութիւն:

(Գլուխ տալով զուրս է գալիս):

### ՏԵՍԻԼ 6.

ՄԻԹԱՅԷԼ, ԿԱՍՍԻԲ.

Միթ. (Ժամացոյցին նայելով) Արդէն ժամանակ է ցուցահանդէսը փակելու: Դուք կարող էք այժմ զնալ տուն և հանգըտանալ:

ԿԱ.Ա. Առաւօտեան զամ՝ բանալին վերցնեմ:

Միթ. Այս, անպատճառ: Կարող է պատահել, որ ես առա-

ւոան ուշ վեր կենամ, որովհետեւ այս երեկոյ ես թատրոն պիտի գնամ:

ԿԱ.Ա. Շատ լաւ, ես կը գտմ:—Բարի գիշեր: (Գնում է:)

### ՏԵՍԻԼ 7.

ՄԻԹԱՅԷԼ (Մենակ).

Ամբողջ տարիներ անսպառ եռանգով աքնել, աշխատել, և վերջիվերջոյ—ահա հետեանքը: Դահլիճը դատարկ, և եթէ պատկերները լեզու ստանձային այնտեղ, ինչպիսի արտունջ և բողոք պիտի բարձրանար իմ դէմ, թէ ում համար և ինչի համար ես մեզ նկարել և շարեցր կախել պատերից... (Դրաից լուռմ է հազի ձայն: ) Հօրեղբայրս է: (Շտապում է դէպի զուրը, ուր երեւում է նրա հօրեղբայր Աբգարը: )

### ՏԵՍԻԼ 8.

ՄԻԹԱՅԷԼ, ԱԲԳԱՐ.

Ա.Բ.Գ. Միթայէլ, բարիկուն:

Միթ. Բարե ձեզ, հօրեղբայրս: Նստեցէք: (Նստում են: )

Ա.Բ.Գ. Հը, ինչ դրութեան մէջ է գործդ, բանուկ է:

Միթ. Ոչ, ես շատ գժողուն եմ:

Ա.Բ.Գ. Մարդիկ գնում-զալիս են:

Միթ. Շատ սակաւ:

Ա.Բ.Գ. Բան-ման ծախել ես:

Միթ. Մի քանի մանր էսկիզներ:

Ա.Բ.Գ. Ծախսդ կը հանես:

Միթ. Ամենեին:

Ա.Բ.Գ. Ցետոյ:

Միթ. Էլ ինչ յետոյ: Մեծ անյաջողութեան հանդիպեցի:

Ա.Բ.Գ. Լսել եմ, լսել եմ: (Կարճատեւ լուսթիւն. Ժպտալէմ զըլուխը թափանարում է: ) Միթայէլ, իմ խօսքը կատարւում է թէ ոչ:

Միթ. Ի՞նչ խօսք:

Ա.Բ.Գ. Ես քեզ չէի ասում մի ժամանակ, որ քո ընտրած արհեստը քեզ հաց չի տայ, քաղցած-ծարաւ կը թողնի: Հիմա ինչ կ'ասես:

Միթ. Նոյնը, ինչ որ տապ: Ես չեմ զղում, որ նկարչութիւն եմ սովորել: Ես միրում եմ գեղարուեատը և ամբողջովին

նրան եմ պատկանում: Զը նայած, որ շատ նեղ օրեր եմ քաշել,  
շատ տանջուել և չարչարուել եմ, բայց այնուամենայնիւ իմ  
սէրը այժմ նոյնքան վառ է իմ մէջ, որքան առաջ, և իմ միակ  
միսիթարութիւնը գտնում եմ դարձեալ իմ ստեղծագործական  
աշխատանքի մէջ:

ԱԲԳ. Շատ գեղեցիկ: Բայց թնդ ես մի հարց տամ: Իսկ  
կինդ, մայրդ, քոյրերդ, միով բանիւ, ընտանիքդ—նոյնպէս միսի-  
թարութիւն են գտնում քո այդ, ինչպէս ասացիր, ստեղծագոր-  
ծական աշխատանքի մէջ: (Առողջիւն:) Տեսնում, եմ, որ դժուա-  
րանում ես պատասխանել: Ոչինչ: Ես կը պատասխանեմ քո փո-  
խարէն: Ո՞չ, նրանք միսիթարութիւն չեն գտնում դրա մէջ, ո-  
րովհետև նրանք պահանջում են քեզնից մարդավայել կեանք,  
իսկ դու դատապարտում ես նրանց աղքատութեան և զրկանք-  
ների:

ՄԻՔ. Իւրաքանչիւր որ հետեւմ է իր ներքին հակումնե-  
րին և ընդունակութեանց, ես էլ գնում եմ այն ձանապարհով,  
որով մղում է ինձ իմ կոչումը:

ԱԲԳ. Ի՞նչ ասել է «կոչում», ի՞նչ ասել է «հակումներ»:  
Դրանք դատարկ խօսքեր են, եղբայր: Մարդ պէտք է յարմա-  
րուի կեանքի պահանջներին, և ինչ բանի մէջ օգուտ չը կայ, նը-  
րանից հեռու պէտք է փախչել:

ՄԻՔ. Ուրեմն ինչ է մնում, որ ես անեմ, ձեր կարծիքով:

ԱԲԳ. Իմ կարծիքով, միայն մի հատ ելք կայ քո առաջ:

ՄԻՔ. Այսինքն:

ԱԲԳ. Թողնել արհեստդ և մտնել ծառայութեան:

ՄԻՔ. (Վրդովուած) Հօրեղբայրս...

ԱԲԳ. Ինչու այդպէս վրդովուեցիր:

ՄԻՔ. Մտածեցէք, թէ ինչ էք ասում ինձ:

ԱԲԳ. Ես այս ասում եմ, իրեն սրտացաւ հօրեղբայր:

ՄԻՔ. Դուք զարհուրեիի բան էք առաջարկում:

ԱԲԳ. Սյդպէս թւում է այժմ, յետոյ դու ինքդ էլ ուրախ  
կը լինիս:

ՄԻՔ. Ուրախ կը լինիմ: Երբէք, հօրեղբայրս, երբէք: Ես  
իմ մանկութեան օրերից սկսած՝ զգում էի իմ մէջ անդիմաղը-  
րելի սէր և հակում զէպի ստեղծագործական մտորումները: Այդ  
սէրը գնալով աւելի և աւելի զարգացաւ իմ մէջ, կլանեց ինձ:  
Եւ այնուհետև ես իմ մէջ անդադար լուսմ եմ մի ձայն, որ ա-  
սում է: «Դու մի գեղարուեսապէտ ես—հաւատարիմ ծառայիր  
քո կոչման, սովորցրու և մարդկանց սիրել այն ամենը, ինչ որ  
բարձր է առօրեայ կեանքից:» Եւ ես՝ անսալով այդ ձայնին, գը-  
նում եմ իմ ընտրած ձանապարհով: Բայց ահա բոլորովին ա-

նակնկալ եկել և կանգնել էք իմ ձանապարհի վրայ և ասում  
էք ինձ. «Զգիր այդ բոլորը», որ ասել է թէ՝ «մեռցրու սէրդ և  
հանդցրու ներախի կայծը»:

ԱԲԳ. Միքայէլ, սիրելիս, ես հօ քո թշնամին չեմ: Ես մի-  
այն քո բարին եմ ցանկանում, ուրիշ ոչինչ: Իմ իղձն այն է,  
որ թէ դու, թէ քո ընտանիքը բախտաւոր լինիք, լաւ ապրէք:  
Այդ է իմ ուղածը: Եւ զրա համար ահա ինչ եմ առաջարկում  
քեզ. լաւ լսիր: Գիտես ինչ: Իմ առետրական տան զրասենեա-  
կում ինձ հարկաւոր է մի լաւ կորրեսպոնդենտ, որ լիզուներ  
իմանայ: Դու, փառք Աստծու, լեզուներ գիտես և շատ լաւ  
կարող ես կատարել այդ պաշտօնը, և քո ծառայութիւնը  
օգտակար կը լինի թէ ինձ համար և թէ մանաւանդ քեզ հա-  
մար: Հիմա մտածիր և ասա: լաւ բան չեմ առաջարկում:

ՄԻՔ. (Գլուխը բացասաբար թափահարելով) Ո՞չ, հօրեղբայրս:

ԱԲԳ. Զը կարծես, որ գործդ շատ ծանր կը լինի: Ազատ ժամներ  
գու միշտ կ'անենաս: Իզուր մի տատանուիր, վճուիր: Զես զզչայ,  
եթէ ընդունես:

ՄԻՔ. Երբէք...

ԱԲԳ. Ես քեզ լաւ ոսճիկ կը նշանակեմ: Գոհ կը մնաս,  
Միքայէլ: Ազանով, մշտական տեղ է:

ՄԻՔ. Հօրեղբայրս, ես կը մեռնեմ՝ վրձնու ձեռիս: Այս  
լաւ իմացէք:

ԱԲԳ. Ազատ ժամանակդ դարձեալ կարող ես պարապել քո  
արհեստով:

ՄԻՔ. Ես չեմ կարող ընդունել ձեր առաջարկը, հասկա-  
ցէք վերջապէս, հօրեղբայրս: Դա անկարելի, անհնարին բան է:  
Երեակայեցէք, թէ ինչ անտանելի դրութիւն կը ստեղծուի ինձ  
համար, օրինակ, հէնց այն ժամին, երբ ես զրասենեակում պա-  
րապելիս լինիմ, և այդ բուգէին յանկարծ մի նոր նիւթ, մի զե-  
ղեցիկ սիւժետ լուսաւորի ինձ, կլանի ուշք ու միաքս, ես սկսեմ  
ոգերուել, և ցանկութիւն գայ իսկոյն եեթ ձեռս առնել վրձի-  
նը և կտաւի վրայ իրազործել ինձ յափշտակած գաղափարը...  
Սյն ինչ, կարող է պատահել, որ նոյն այդ ժամին իմ պաշտօ-  
նական անյետաձեկելի գործը պահանջում է, որ ես կաշկանդուած  
մնամ զրասեղանի մօտ և անյապալ պարտիում: Դա կը նշանա-  
կէ—երկու կրակի մէջ լսորովուել:

ԱԲԳ. Ես զարմանում եմ...

ՄԻՔ. Իրաւունք ունիք: Մենք իրար չենք կարող հասկա-  
նալ:

ԱԲԳ. (Վեր կենալով) Դու գիտես, եղբայր: Ես քեզ չեմ զօ-  
րում: Իմ այստեղ գալու նպատակն էր մի բարութիւն անել

իմ հանգուցեալ եղբօր որդուն: Բայց իզուր: Բարութիւնս բա-  
նի տեղ չ'անցաւ: Բարնկ մնաս: (Գնում է:)

ՏԵՍԻԼ 9.

ՄԻՔԱՅԵԼ. (Մենակ).

Ի՞նչ անհասկացողութիւն և արհամարհանք դէպի գեղա-  
րուեսար: Զը հետաքրքրուեց մինչև անգամ անցնել այն կողմ և  
մի աչք ձգել պատկերների վրայ: (Մտնում է Ֆլորան:)

ՏԵՍԻԼ 10.

ՄԻՔԱՅԵԼ, ՖԼՈՐԱ.

Ֆլ. Միքայէլ, թատրոն գնում ենք թէ ոչ:  
Միք. Կ'երթանք:—Այս բռպէիս զիտես ով էր այստեղ,  
Ֆլորա:

Ֆլ. Ո՞վ:

Միք. Իմ հօրեղբայր Արգարը:

Ֆլ. Ես նրան տեսայ, բարենց և անցաւ: Ի՞նչ համար էր  
սկել:

Միք. (Քմծիծաղ) Կարող ես երեակայել, Ֆլորա, թէ նա  
ինչ էր ինձ առաջարկում:

Ֆլ. Ի՞նչ:

Միք. Հա-հա-հա:—Առաջարկում էր ինձ ձգել արուեստս  
և մտնել իր մօտ ծառայութեան:

Ֆլ. (Ուրախ) Իր մօտ ծառայութեան: Ուղիղ ես ասում,  
Միքայէլ:

Միք. Ա՛, ինչպէս ուրախացաւ: Աչքերը փայլեցին:

Ֆլ. Իսկ ինչ պաշտօն էր առաջարկում:

Միք. Լինել կորրեսպոնդենտ:

Ֆլ. Դա քեզ յարմար պաշտօն է, Միքայէլ:

Միք. Ի՞նձ, յարմար պաշտօն:

Ֆլ. Իհարկէ, շատ յարմար:—Իսկ սոճիկը:

Միք. Խոստանում էր յաւ ոռծիկ:

Ֆլ. Ո՞րքան:

Միք. Այդ չ'ասաց:

Ֆլ. Ցետոյ, ընդունեցիր:

Միք. Ես ցաւում եմ, Ֆլորա, որ դու ուրախանում ես:

Ֆլ. Ի՞նչ, ուրեմն չես ընդունել:  
Միք. (ախատ) Ես նրան բացէիբաց մերժեցի:

Ֆլ. Մերժեցիր: Ավանս...

Միք. Հապա ի՞նչ: Ուրեմն ընդունէի:

Ֆլ. Իհարկէ, ընդունէիր: Տէր Աստուած, բախտն իր ո-  
տով դալիս է դուռդ ծեծում, և դու քչում ես քեզանից:

Միք. Եւ դու այդ լուրջ ես ասում, Ֆլորա: Ուրախ կը  
լինէիր, եթէ ես...

Ֆլ. Ուրախ կը լինէի թէ խօսք է: Դա մի երջանկութիւն  
կը լինէր մեղ համար: Կ'ազատուէինք վերջապէս այն բոլոր նե-  
ղութիւններից, որ մենք կրում ենք չքաւորութեան պատճառով,  
մենք էլ օր կը տեսնէինք, կեանք կը վայելէինք, կարող էինք  
տուն ու տեղ սարքել, վայելուչ կերպով հագնուել, մարդամէջ  
երեալ...

Միք. Ո՞վ զիտէ. գուցէ այդպէս իրօք ձեղ համար շատ  
լաւ կը լինի: Բայց ինչ կը լինի իմ գրութիւնը—այդ է խնդիրը:

Ֆլ. Ի՞նչ էլ որ լինի, յամենայն զէպս այժմեան գրութիւ-  
նից ոչ աւելի վատ, որովհետեւ այս բռպէիս, ձշմարիտ, ի՞նչ է  
մեր վիճակը. համարեա ոչինչ չ'ունինք, ամեն բանից գուրկի  
աղքատ... Իսկ հօրեղբօրդ առաջարկութիւնը եթէ ընդունես,  
դա կը լինի մեղ համար—փրկութիւն:

Միք. Փրկութիւն... Ցաւալիք է լսել այդ բոլորը... Ուրե-  
մըն ձեր բախտաւորութիւնը կախուած է իմ անձնուրացու-  
թիւնից. ուրեմն դու ես, Ֆլորա, ցանկանում ես, որ ես կոստր-  
անում վրձիններս և դէն, ձգեմ, հանգչնեմ այն հուրը, որ անդա-  
գար վառւում է իմ ներսը, մնաք բարեաւ ասեմ ոգեսրութեանս  
անդին ժամերին, մոռանամ բնութեան ամբողջ պէէզիան, երա-  
գանքը—թողնեմ այս բոլորը և կեանքի ծովի խորքը նետուեմ...  
Ֆլորա, դու այս ես կամենում արդեօք:

Ֆլ. Միթէ հօրեղբայրդ քո վասն է ցանկանում, որ նա...

Միք. Հօրեղբօրս համար, այն, շատ զիւրին բան էր,  
գուցէ և իր սիփական օդակի համար, անխիղճ սառնասրաւ-  
թեամբ խորհուրդ տալ, որ ես ձգեմ ամեն ինչ և մտնեմ իր մօտ  
ծառայութեան: Դրա պէս մարդկանց համար ինչ բան է զեղա-  
րուեստը: Գեղարուեստի տուած բարձր զուարձութիւնները դրանց  
օտար են: Դրանց մէջ զերակշում է հողեղէնը, նիւթականը,  
ոչինչ վերացական, ոչինչ հոգեոր և վուեմ: Դրանց սիրաը կար-  
ծըր է, հակումները զոենկական, ազնիւը և վեհը զրանց չէ յա-  
փշտակում: Սովոր հօրթի մոլեռանդ երկրպագուներ են զրանք,  
զրանք բոլորն այդպէս են: Բայց դու, Ֆլորա, ասա, թե ի՞նչ  
պատահեց, որ այդպէս փոխուեցիր: Ես վազուց է նկատում եմ

քո մէջ մի տեսակ սառնութիւն դէպ իմ պարապմունքը, մինչև  
անգամ, եթէ կ'ուղես, մի տեսակ հեղութիւն, որ հազիւ կա-  
րողանում ես քօղարկել... Ասա, այդ ինչիցն է արդեօք:

Ֆէ. Սյդ շատ բնական է և հասկանալի: Ի՞նչպէս կարող ենք  
մենք չը սառչել, մինչև իսկ չ'ատել այն պարապմունքը, այն ա-  
րուեսար, որի պատճառով մենք այնքան զրկանք և նեղու-  
թիւններ ենք կրել և կրում ենք...

Միթ. Ֆլորա, Ֆլորա, չը որ հէնց նոյն այդ արուեսարի չնորհիւ  
էր, որ մենք ճանաչեցինք իրար և իրար սիրեցինք... Յի-  
շում ես արդեօք մայիսի այն գեղեցիկ առաւօտը, երբ դու  
և ընկերութիւն, երկուադ էլ մատղաշ, ծաղկափթիթ հասակում  
անտառային թուչունների պէս, ուրախ և աշխոյժ եկաք իմ պատ-  
կերահանդէսը: Դու սքանչելի էիր, զրաւիչ, թարմ, ինչպէս զար-  
նան առաջին վարդը, որ բացւում է արշալուսի հետ: Քեզ տե-  
սայ թէ չէ, մի ակնթարթում, կարծես ելնկտրական զօրութեամբ,  
սիրոյ կայծ վառուց իմ մէջ, և ես կլանուեցի քեղանով... Մինչ  
դու հիացած և ակնդէտ նայում էիր պատկերներին, ես քեզնով  
էի զմայլուած, չէի համարձակւում աչքս թեքել քեղանից: Ահա  
այդ ժամանակ ջերմ համակրութեամբ լցուած սեր հայեացքները  
իրար հանդիպեցին, մենք իրար հասկացանք և անխօս ու անձայն  
սիրոյ ուխտ կապեցինք իրար հետ... Իսկ յետոյ, երբ դուք հրա-  
ժեշտ տուքը ինձ և կամենում էիր հեռանալ, ինչպիսի քաղցր,  
նազելի ժպտով դու ետ նայեցիր դէպի ինձ... Ֆլորա, այդ բո-  
պէին ինձ թւաց, որ դու մի երկնային էակ ես, օժտուած չը-  
նաշխարհիկ գեղեցկութեամբ, որ քեզ Աստուած է ուղարկելինձ  
համար, որպէսզի իմ կեանքի անբաժան ընկերը լինիս, որպէս-  
զի վեսթալուհու նման վառ պահես իմ մէջ սրբազն հուրը,  
երբ հանդէլ ուզենայ, որպէսզի իմ գործունէութեան փշոտ աս-  
պարիզի վրայ, երբ վհատել սկսեմ, դու լինիս իմ հրաշտակ պա-  
հապանը... Եւ ես չը սխալուեցի: Արդարե, դու այդպէս էիր  
սկզբումը, մեր ամուսնութեան առաջին տարիները: Միրելով  
ինձ՝ դու սիրեցիր և իմ աշխատանքը, սկսեցիր սովորել իմ ա-  
րուեսար և մինչև անգամ երազում էիր դառնալ երեելի նկարչու-  
հի... Բայց յետոյ վոխուեցիր, կամաց-կամաց սառար դէպի իմ  
պարապմունքը, և ահա, այժմ, երբ ես աւելի, քան երբեէ,  
կարօտ եմ միթարութեան և քաջալերող ձայնի, Ֆլորա, դու  
ինձ մենակ ես կամենում թողնել իմ դժուար ճանապարհի վր-  
բայ...

Ֆէ. Ի՞նչ անեմ, սիրելիս, յուսահատուել եմ: Տանեցիք բո-  
լորն էլ յուսահատուել են: Մենք ապրել ենք ուզում, Միթայէլ,  
փոքրիշատէ մարդավայել, տանելի կեսնք. իսկ քո պարապ-

մունքը մեր անհրաժեշտ պիտոցներին էլ բաւականութիւն չէ  
տալիք: (Արտասուազին) Մենք հօ չենք ապրում, այլ միայն տանջը-  
ւում, հալումաշ ենք լինում, ամեն բանից զուրկ, ոչ մի ուրա-  
խութիւն, ոչ մի սփոփանք... Դու քո մինիթարութիւնը գանում  
ես քո արուեսատի մէջ, նրանով տարուում, յափշտակւում ես: Իսկ  
մենք, մենք ինչ աննեք, ասա, ինչի մէջ զանենք մեր միթա-  
րութիւնը: Հապա մեզ չես խղճում: Ուր է, երանի չէ, որ մեր  
ձեռքիցն էլ մի բան դար, ու մենք էլ աշխատէինք օրնի-  
րուն...

Միթ. Ես հասկանում եմ ձեր զրութիւնը, Ֆլորա, զիտեմ,  
թէ որքան անտանելի է զատարկ և անխորհուրդ կեանքը, մա-  
նաւանդ չքաւորութեան մէջ: Բայց ի՞նչ անեմ, ասա, որ կարո-  
ղանամ բարւոքել ձեր վիճակը:

Ֆէ. Ընդունիր հօրեղբօրդ առաջարկը:

Միթ. Բայց դա կը լինի իմ կողմից մի մեծ զոհաբերու-  
թիւն:

Ֆէ. Ընտանիքիդ սիրոյ համար արա այդ զոհաբերութիւնը:  
Միթ. Ա՛խ, Ֆլորա...

Ֆէ. Բայց այդ, իսկապէս, մի առանձին զոհաբերութիւն  
էլ չէ: Ի՞նչ ես կորցնում, ասա, ընդունելով հօրեղբօրդ առա-  
ջարկած պաշտօնը՝ դու հօ չես ծախում նրան քո ամբողջ ժա-  
մանակը: Դու միշտ կ'ունենաս աղատ ժամեր, երբ զարձեալ կա-  
րող ես պարապել քո սիրած դրծով:

Միթ. Այդ տեսակ պարապմունքից ոչինչ չի դուրս դայ:

Ֆէ. Վերջապէս դու հօ ընդմիշտ չես թողնում վրձինդ:  
Դա կը լինի մի ժամանակաւոր զբաղմունք, մինչև որ մեր զը-  
րութիւնը մի քիչ կը լաւանայ: Այնուհետև եղբայրդ՝ վահանն  
էլ կ'աւարտի, կը դայ, քեզ օգնութեան ձեռք կը մեկնի, դու կը  
թեթևանաս հոգսերից, և այն ժամանակ ովեռուիր, ինչքան  
սիրտդ կը տայ, թէկուզ զիշեր-ցերեկ պատկերակալի մօտից մի  
հեռանար:

Միթ. (Գէմը պայծառանում է) Այդ լաւ ասացիր, Ֆլորա, վա-  
հանը կը դայ, և ամեն ինչ կը բարեփոխուի: (Մտածելով եւ ուրախ)  
Այն, նա ձեզ կը տայ ձեր ուզած բախտաւորութիւնը, իսկ ինձ—  
ազատութիւն հոգսերի գերութիւնից: Այն, հիանալի կը լինի:  
Այն ժամանակ ես ինձ թեթի կը զզամ եթերի նման, ինչպէս  
արծիւ կը սաւառնեմ վերե, և իմ ստեղծագործութեան հորի-  
զնը այնպէս կ'ընդպարձակուի...

Ֆէ. (Ոնհամբեր) Ուրեմն ընդունում ես:

Միթ. Բայց սպասիր: Մի ամբողջ շաբաթ դեռ կայ առաջ-  
ներիս, կարող է պատահել, որ հէնց վազն եեթ մի ունեար

գեղարուեստասէք մանի այստեղ և ցանկութիւն յայտնի ձեռք  
բերել իմ ամենաթանկազին պատկերը, որ արժէ 2500 բուրլի...

Ֆլ. Դա ուրիշ բան կը լինի: Այն ժամանակ...

Միթ. Այն ժամանակ մենք մի ամբողջ տարի ապահով ենք. ոչ հոգս, ոչ կարիք: Դուք կ'ապրէք ձեղ համար ուրախ,  
երջանիկ... իսկ ես—կ'երթամ ճանարարհորդելու: Վաղուց  
շատ վաղուց է, որ ես մեր երկրից ելած չեմ: Այնպէս կարօտել  
եմ զրսի աշխարհի տեսութեան...

Ֆլ. Իսկ եթէ չ'արդարանայ մեր յոյսը, որ շատ հաւա-  
նական է:

Միթ. Այն ժամանակ... Այն ժամանակ—ես չը դիտեմ...  
Յամենայն դէպս մի շաբթից յետոյ շատ բան կը պարզուի—  
Գնանք: (Գնում են:)

### ՎԱՐԱԳՈՅՔ

523  
38

### ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Նկարիչ Թաշմեանի բնակարանը: Մի բնտարձակ սենեակ հասարակ  
կահաւորութեամբ: Գվաւոր մուտքը ճակատից, երկու կողմից լուսամուտ-  
ներ: Աջակողմեան եւ ձախակողմեան դռները տանում են դէպի կացարա-  
նի ներսը: Լուսամուտի մօտ դրուած է պատկերակալը: Սեղան, որի վրայ  
նկարչական այլեւայլ պարագաներ՝ ներկապնակ, վրձիններ, իւղաներկի  
սրուակներ եւայլն: Սենեալի պատերից կախուած են պատկերներ՝ ծած-  
կուած քողով: Ծաղիկներ:

Ժամանակը—ձմեռ, կէսօր. զուրսը բուք եւ ձիւն: Առաջին եւ երկը-  
րորդ գործողութեան միջեւ անցել է մի տարուց աւելի ժամանակամիջոց:

### ՏԵՍԻԼ 1.

#### ՅԵՐԱ, ՄԱՆԱՍԵԱՆ.

ՄԱՆ. Շատ ափսոսում եմ, տիկին, որ պարոն Միքայէլը  
տանը չէ: Ես վաղուց է չէի տեսել նրան: Պատահմամբ մտայ  
այս քաղաքը և քաղցր պարտք համարեցի այցելել և հրաժեշտ  
տալ իմ նախկին ուսուցչին:

Ֆլ. Կ'ուզէք, սպասեցէք: Ամուսինս չուտով կը գայ ծառա-  
յութիւնից:


ՄԱՆ. Ծառայութիւնից... Նո ծառայում է:

Ֆլ. Այն, իր հօրեղոր առետրական տան զրասենեակում  
կորրեսպոնդենտ է:

ՄԱՆ. Կորրեսպոնդենտ, առետրական տան զրասենեա-  
կում:

Ֆլ. Դուք զարմաննում էք, պարհն, որ ամուսինս ծառա-  
յութ է:

ՄԱՆ. Այն, տիկին, հաւատադր, և երեակայել անգամ



չէի կարող, որ մեր տաղանդաւոր նկարիչը վրձինը թողած՝  
մի որեւ առետրական տան կորրեսպոնդենտի պաշտօն է վա-  
րում: Նկարիչ—ե առետրական տան կորրեսպոնդենտ! Շատ  
խորթ է հնչում: Կաւ, գոնէ ազատ ժամերին նկարում է:

**Ֆլ.** Ազատ ժամեր նա համարեա չ'ունի:

**ՄԱՆ.** Ուրեմն նա այլևս բոլորովին ձեռը չէ առնում վըր-  
ձինը:

**Ֆլ.** Այս վերջին տարին շատ սակաւ:

**ՄԱՆ.** Ի՞նչ էք ասում, տիկին:

**Ֆլ.** Ի՞նչ արած: Մեզ մօտ նկարչի պարապմունքը չէ զը-  
նահատում ըստ արժանույն: Անկարելի է նրա վրայ յոյս դնել:

**ՄԱՆ.** Պատկերները չ'էին վաճառւում:

**Ֆլ.** Շատ սակաւ: Դուք պէտք է տեսնէք, թէ ինչպէս էր  
յուսահատուած Միքայէլը, երբ փակեց իր վերջին ցուցահանդէսը:  
Վաթսունի չափ իւղաներկ պատկերներ կային, որոնց վրայ նա այն-  
քան աշխատանք էր դրել: Եւ վերջիվերջոյ—ոչ մի վարձարու-  
թիւն, ոչ մի խրախոյս ապագայ գործունէութեան: Նրա պատ-  
կերահանդէսը մի ամբողջ հարստութիւն էր, բայց, չը նայած  
դրան, նա ստիպուած էր պարտքեր անելու...

**ՄԱՆ.** Անկասկած, մեր մայրենի գեղարուեստը անհայտան-  
ձելի վիճակի մէջ է, բայց... պէտք է տոկար:

**Ֆլ.** Այնպէս զայրացած էր ամուսինս... նա կոտրտեց իր  
վրձինները, դէն ձեց ներկապնակը, երդուեց այլես ոչինչ չը  
նկարել: Նա շարունակ կրկնում էր. «Չ'արժէ մարգարիտներ ա-  
ծել դրանց առաջ, որ կոխ տան և անցնեն»:

**ՄԱՆ.** Եւ իր երդմանը մնաց հաւատարիմ:

**Ֆլ.** Ո՛չ, չը կարողացաւ: Չանցաւ մի ամիս, մէկ էլ տես-  
նեմ, կամաց-կամաց նոր կտաւ է պատրաստում: «Իսկ երդումդ»,  
հարցրի ես: Նա—լսեցէք թէ ինչ է պատասխանում: «Ես պատ-  
րաստ եմ մինչև անդամ հոգիս գրաւ գնել սատանայի մօտ,  
միայն թէ կատար ածեմ այս հոյակապ նիւթը, որ նստած է  
զլիխ մէջ և ինձ հանդիսաւ չէ տալիս»:

**ՄԱՆ.** Կեցցէ: Այգպէս կը վարուէր ասեն մի իսկական գե-  
ղարուեստագէտ, որի համար ստեղծագործութիւնը մի ներքին  
պահանջ է: Եթէ իմանամ, որ պարոն Միքայէլը, իրաւ, վճռել  
է թողնել իր արուեստը և այն ընդմիշտ, այն ժամանակ ես նը-  
րան ոչ մի կերպ չեմ կարող ներել: Իմ աչքում դա մի յան-  
ցանք է:

**Ֆլ.** Իսկ երբ կարիքը ստիպում է... Միթէ չը կան, միթէ  
քիչ են, օրինակ, զբողներ, գերասաններ, որոնք կարիքից հար-

կազրուած՝ ձգում են իրանց ասպարէզը և ուրիշ աշխատանքի  
մէջ որոնում ապրուսափ աղբիւրը:

**ՄԱՆ.** Այս, և գաւաճանում իրենց կոչմանը: Բայց միթէ,  
իրաւ, այդ աստիճան մեծագօր է կարիքը, որ նա կարուանում  
է մեոցնել լաւագոյնը, ինչ որ կայ մարդու մէջ... Տիկին, գե-  
ղարուեստի գլուխ-գործոցներ գիտեմ ես, որոնք ծնունդ են առել  
զրկանքի և ծայրայեղ կարիքի մէջ:

**Ֆլ.** Շատ կարելի է, պարոն: Բայց իմ ամուսինը ուրիշ  
կերպ չէր կարող վարուել: Նա ինքը մնակ մի զլուխ չէ: այլ  
մի ամբողջ գերդաստանի միակ նկցուկը և ապաւէնը:

(Դրան մէջ երեսում է Միքայէլը, ձեռքին մի պայուսակ: Դէմքի  
վրայ յոգնութիւն եւ մնամադոտ ժպիտ):

## ՏԵՍԻԼ 2.

**ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ, ՄԱՆԱՍԵԱՆ.**

**ՄԱՆ.** Այս և իմ յարգելի ուսուցիչը:

**ՄԻՔ.** Մանասեանը... Բարե՛, բարե՛, սիրելին—Այս երբ:

**ՄԱՆ.** Սյաօր եկել եմ և շուտով պիտի մնկնեմ:

**ՄԻՔ.** Իսկ ուր:

**ՄԱՆ.** Սրտասահման:

**ՄԻՔ.** Դարձեալ Միւնիսըն:

**ՄԱՆ.** Այս և Այնուհետեւ Պարիզ՝ Փրանսիական շկոլային ի  
մօտոյ ծանօթանալու:

**ՄԻՔ.** Ա՛խ, եթէ ես էլ կարողանայի դալ ձեզ հետ, մտնել  
զեղարուեստի իսկական աշխարհը՝ տեսնելու, թէ արդեօք ինչ  
նոր հովեր են փշում այնտեղ:

**ՄԱՆ.** Եկէք զնանք: Գիտէք, պարոն Միքայէլ, դուք այն-  
տեղ շատ կը թարմանաք:

**ՄԻՔ.** Այս, այդ շատ լաւ կը լինի: Բայց... էն, վախենում  
եմ մեռնեմ, մինչև այդ յաջողուի, և իմ երազը մնայ լոկ երազ:

**Ֆլ.** «Մեռնել»... ինչ սիրում ես դու կրկնել այդ խօսքը,  
Միքայէլ:

**ՄԱՆ.** Տիկինը իրաւամբ բողոքում է: Ի՞նչ մեռնելու ժա-  
մանակ է: Դեռ նոր ենք սկսում ապրել, դուք արդէն մեռնե-  
լուց եք խօսում:

**ՄԻՔ.** Ներկցէք, մոռանանք:—Հա, իրաւ, ես մի բան էի  
կամենում հարցնել: Զէ որ ձեր հայրը հակառակ էր, որ նկար-  
չութիւն սովորէիք...

**ՄԱՆ.** Օ՛, սաստիկ գէմ էր: Ասում էր, վկոպէկ չեմ

ԲԺ. Լաւ կ'անես, մի քիչ հանգստանաս:—Դէ, այժմ ինձ թոյլ տուեք հրաժեշտ տալ: Սյսօրտանից ես դադարեցնում եմ իմ այցելութիւնները: Հարկաւոր դէպքում ես միշտ պատրաստ եմ ծառայելու:

ՄԻՔ. Խորին չորհակալութիւնս, բժիշկ: Մի օր ես պիտի մտեմ քեզ մօտ, որպէսզի ինձ մի լաւ քննես:

ԲԺ. Ուրախութեամբ, բարեկամս, ուրախութեամբ:

ՄԻՔ. Սյօ տեղս (ցոյց տալով սրտի կողմը) մի ինչ-որ անախորժ բան է կատարւում:

ԲԺ. Երբ կ'ուղես: (Գնում է:)

### ՏԵՍԻԼ 7.

ՄԻՔԱՅԻԼ, ՖԼՈՐԱ, ԵՂԻՍՍԲԵՅԹ.

ՖԼ. Մայրիկ, տեղերդ շինեմ, որ պառկես:

ԵՂԻՄ. Սիր կերակրին նայող չը կայ: Աղջկերքը ուր են, է: ՖԼ. Կերակրին ես կը նայեմ: Իսկ աղջկերքը հարեան-ների մօտ են:

ԵՂԻՄ. Դէ լաւ: Ես գնամ պառկեմ: Ծնկներս շատ են նե-ղացնում:

ՖԼ. Գնանիք, մայրիկ: (Ֆլորան եւ Եղիսարէթը գնում են: Միքայլը մնում է մնակի:)

### ՏԵՍԻԼ 8.

ՄԻՔԱՅԻԼ (Մենակ).

ՄԻՆՉԻ ճաշը գեռ կայ մի կէս ժամի չափ: Երթամ ներկե-րը բերեմ: Տեսնենք, թէ ինչ պիտի դուրս գայ այս չարաբաս-սթիկ պատկերից: Ինձ շատ չարչարեց: (Գնում է: Փիչ յետոյ մըտ-նում է վահանը:)

### ՏԵՍԻԼ 9.

ՎԱՀԱՆ, յետոյ ՍԱԹԵՆԻԿ, ՎԱՐՍԵՆԻԿ և ԱՆԱ.

ՎԱՀ. (Կերծ հաղ) Ի՞նչ լուռ է չորս կողմը: Գնած են ինչ է:—Մայրիկ: (Մէկը միւսի ետեւից արագ մտնում են Սաթենիկը, Վար-սենիկը եւ Անան եւ համարեա փաթաթւում են իրենց եղբօր գովզը):

Ների մէջ գոնէ մի փոքրիկ յառաջադիմութիւն ցոյց տայի: Ընդհակառակը, ես քայլ առ քայլ դէպի ետ եմ զնում: Եւ հասկանալի է պատճառը: Տաղանդը նման է բոյսի. որպէսզի աճի, ծաղկի և պտուղ տայ, հարկաւոր են՝ պարարտ հող, լոյս և ջերմութիւն. այլապէս նա պիտի թառամի, չորանաց... Ես էլ ահա—(Յանկարծ ծեռը զնում է կրծքի վրայ, անխորժ զգացմունքից դէմքը կծկում է): Ֆլորա, մի բաժակ չուր:

ՖԼ. Ա՛յս, Միքայէլ... (Ճտապում է ջուր բերելու:)

ՄԱՆ. (Խորհրդաւոր) Գուք սրտի թրթոսն ունիք:

ՄԻՔ. Նոր է սկսել: Առաջ չը կար:

ՄԱՆ. Երկար խօսել ձեզ կարող է վասեր: Դուք հանդրատացէք, պարհն Միքայէլ, իսկ ինձ (Վեր է կենում) թոյլ տուեք հրաժեշտ տալ ձեզ:

ՄԻՔ. Ի՞նչ կայ շտապում էք: (Ֆլորան բերում է ջուր եւ տալիս նրան խմելու:)

ՄԱՆ. Տիկին, ինձ կը ներէք...

ՖԼ. Գնում էք:

ՄԱՆ. Սյն, մի—քանի ծանօթներիս էլ պիտի տեսնեմ և յետոյ—դէպի կայարան: Յանկանում եմ ձեր ամուսնուն կա-տարեալ առողջութիւն:

ՖԼ. Ծնորհակալ եմ:

ՄԻՔ. Կացէք մեզ մօտ ձաշի:

ՄԱՆ. Ուրախութեամբ, եթէ միայն...

ՄԻՔ. Դուք գիտէք:

ՄԱՆ. Ի սէր Աստծոյ, աշխատեցէք մի հնար գտնել բար-ուրելու ձեր զրութիւնը... Ախսան է ձեր տաղանդը:

ՄԻՔ. Ես գեռ յոյս չեմ կորցրել:

ՄԱՆ. Եթէ ձեզ նման վարպետները հեռանան ասպարիզից, այն ժամանակ էլ ով պիտի մնայ:

ՄԻՔ. Զը գիտեմ, թէ ինչ կարող եմ անել ես այսուհետեւ: Սրգէն սոզում եմ դէպի ծերութիւնը: Բայց գուք գեռ բոլորովին երիտասարդ էք: Զեր առաջ բաց է ապագայի մի զեղեցիկ հեռապատկեր: Գնացէք: և կատարելագործուեցէք: Սրտանց ցանկանում եմ այնքան առաջ գնաք, որ մինչեւ իսկ Եւրոպայում երեսի նկարչի նոչակ վաստակէք և, երբ վերադառնար հայրենիք, մեր գեղարուեսի աշխարհը ձեզ զրկաբաց ընդունէ:

ՄԱՆ. Ծնորհակալութիւն ձեր բարեմաղթութեան համար: —Այժմ ես գնամ: Տիկին, մնաք բարի:

ՖԼ. Բարի ճանապարհ:

ՄԱՆ. (Կրան մօտից) Յարգմնիք: (Գնում է:)

ՏԵՍԻԼ 3.

ՄԻՔԱՅԵԼ, ՖԼՈՐԱ.

Միք. (Տրտում մօտենալով պատկերակալին եւ զդիտելով Թերակատար պատկերը՝ ձեռքը խփում է ճակտին) Ա՛խս...

Ֆլ. Դարձեալ «ամս»: Ե՞րբ կը վերջանայ քո ախուվախը, Միքայէլ:

Միք. Ինչու նեղանում ես: Երբ ես ախ եմ քաշում, սիրությունը իսկ ինչ հանգստանում է:

Ֆլ. Իսկ դա ինձ տանջում է:

Միք. Ֆլորա, հաւատա ինձ, այնպիսի բոպէներ են դալիս, որ ես ասրօբինակ պահանջ եմ զգում—դոչել, ինչքան ձայնումը ձայն կայ, հեկեկալ երեխայի պէս:

Ֆլ. Բայց ինչու, ասա տեսնեմ, ինչիցն է այդ վիշտը, կարծես աշխարհը քոնն էր—և ձեռքիցդ խլեցին:

Միք. Այս, զու ուղիղ ասացիր: Ես ունէի մի աշխարհ, որ իմ ձեռքիցս խլուած է: Դա մի գեղեցիկ, բանաստեղծական աշխարհ էր, լիբը ոգերութեամբ և երազներով, հոգեզմայլ խաղաղութեան և զոռ փոթորիկների մի աշխարհ, մի աշխարհ էր դա, որ բնութեան հազար ու մէկ պերճ, սքանչելի տեսարաններով ճոխացած՝ ամեն բոպէ վկայում էր Արարչապետի յաւիտենական և անհասանելի գերհանձարը... Դա մի զրախտ էր ինձ համար, որից ես արտաքսուած եմ այժմ և զատապարտուած ճակտիս բրտինքով և կեանքս մաշելով մեր օրուայ հացը հայթհայթելու...:

Ֆլ. Դրա համար էլ մտածել է պէտք: Հարիւրաւոր, հազարաւոր մարդիկ միթէ չեն չարչարւում, քեզանից էլ աւելի, և բոլորը մի կտոր հացի համար չէ:

Միք. Եւ երանի դրանց: Ապրելով միայն ապրելու համար՝ դրանք ոցինչ չեն կորցնուած, դրանք ուրախ են, դրանց բախտաւորութիւնը նոյնիսկ ապրելու մէջն է: Բայց ինձ համար այդպիսի անխորհուրդ կեանքը զին չ'ունի: Նա մի տանջանք է, մի անէծք է, և ես նման եմ այժմ մի ճամբորդի, որ մտամոլրդ դեղերուամ է աջ ու ձախ ու չը գիտէ, թէ ուր է զնում և ուր պիտի գնայ:

Ֆլ. Է՞ս, ինչ հարկաւոր է այդքան մոայլ աչքով նայել կեանքի վրայ: Կեանքի նպատակը հէնց կեանքն է, որ կայ:

Միք. Ո՞չ, ինձ համար՝ ապրել—նշանակում է ստեղծագործել: Այդ էր իմ կեանքի կէտ—նպատակին: Դրա մէջ էր իմ

բախութիւնը, առանց դրան ես մի խղճակի արարած եմ միայն... Ֆլ. Օտար մարդու ձայն: Լսեցիր: Կարծեմ բժիշկն է: (Մոռնալով դրան) Նա է: (Մանում է բժիշկը՝ ձեռքերը շփելով ցրտից):

ՏԵՍԻԼ 4.

ՄԻՔԱՅԵԼ, ՖԼՈՐԱ, ԲԺԻՇԿ.

Բժ. Ինձ կը ներէք, վոքր ինչ ուշացայ: (Ճնշում է, գոլորշի) Օ՛, սաստիկ ցուրտ է ձեր բնակարանը: Տասը աստիճան հազիւ կը մինի: Սյատեղ կարելի է սառչել: Վասարանները լաւ վառեցք, թէ չէ ձեր տունը կը դառնայ հիւանդանոց:

Միք. Դուրսն էլ լաւ ցուրտ է, բժիշկ, Սառնամանիք է:

Բժ. Սարսափերի բուք է անում: Նորդի չարութիւնը բոնել է, սասցի կտորտանք է, որ երեսով է տալիս: Քամու ձեռոցնիսկ եկեղեցու զանգերը հանգիստ չ'ունին. դողում, մրմիջում, խղճակի ճայներ են հանում—զանգ-զբո՞նդ-զինդ...

Միք. և Ֆլ. (Ծիծաղում են):

Բժ. Է՞ս, մայրիկը ինչպէս է:

Ֆլ. Հիմա լաւ է, բժիշկ: Մինչի անգամ խոհանոց է զընացել:

Բժ. Խոհանոց: Երեսակայում եմ, թէ ինչ կը լինի հիմա ձեր խոհանոցը: Բայց ես արգելել էի նրան առայժմ մանել այնտեղ: Զարմանալի է, Միքայէլ, այս մեր մայրերի բանը: Ի՞նչպէս են սիրում խոհանոցը: Կեսնքի մեծ մասը, կարելի է ասել, անց են կացնում խոհանոցում: Դա իհարեկէ, հայ կնոջ անարարութեան ապացոյց է, բայց պէտք է մտածել, կարծեմ, և սողջութեան մասին:—Տիկին, խնդրեմ մայրիկին կանչէք:

(Ֆլորան կնում է):

ՏԵՍԻԼ 5.

ՄԻՔԱՅԵԼ, ԲԺԻՇԿ.

Բժ. Նու, Միքայէլ, ինչ նորութիւն ձեր գեղարուեստի աշխարհում:

Միք. Հիմա ես աւելի տեղեակ եմ առեարական աշխարհի նորութիւններին:

Բժ. Հա-հա-հա: Նոր բան չ'ունիս նկարած, մի նայենք:

Միք. Ուշադրութեան արժանի ոչինչ:  
 Բժ. է՛հ, լաւ չէ, բարեկամս: Ծուլութիւն ես անում:  
 Միք. Ես ծոյլ չեմ, բժիշկ, այլ հիւանդ:  
 Բժ. Հիւանդ ես, կը բժշկենք:—Ի՞նչդ է որ...  
 Միք. Արբաս է սկսել յաճախ թրթռալ:  
 Բժ. Քո այժմեան պարագմոնքը, երիի, սրտովդ չէ, և  
 այդ քեզ մտածել է տալիս, այս:  
 Միք. Բաւական չէ, որ մտածել է տալիս, ինձ ուղղակի  
 մաշտամ է:  
 Բժ. Ե՛կ, Միքայէլ, թնդ պաշտօնդ, որ միանդամայն ան-  
 համապատասխան է թէ քո հակումներին, թէ փիզիկական կազ-  
 մուածքից: Նստակեաց աշխատանքը քեզ վնասում է:  
 Միք. Ես, իհարկէ, ուրախ կը լինէի թողնել: Բայց ես  
 այժմ նման եմ մի թոշոնի, որ խճանել է ցանցի մէջ. թրպր-  
 առում, թրպրտում է, ազատուել չէ կարողանում:  
 Բժ. Ինչու:  
 Միք. Բժիշկ, ես անօդնական և մենակ եմ, բոլորովին մե-  
 նակ...  
 Բժ. Իսկ վահանը, եղբայրդ: Նա իրան հեռու է պահում  
 ձեզանից:  
 Միք. Ի՞նչ հեռու... Մենք չը կանք նրա համար:  
 Բժ. Ուզիզ ես առում:  
 Միք. Հաւատամ, բժիշկ, Ամիսներով ոտ չէ զնում միր տա-  
 նը: Կատարեալ անուշադրութեան է մատնել մեզ: Եղբայրական  
 սիրոյ ամենաքնքոյց զգացմոնքը վիրաւորուած է իմ մէջ:  
 Բժ. Բայց ինչու այգաբէս...  
 Միք. Հարստանալ է փափագում մարզը: Եւ ինչպէս է  
 գողում փողի վրայ, —ինչպէս մի նոր Հարպագոն... Սյու ինչ,  
 այնպէս դիւրին էր նրա համար օգնութեան հասնել իր խեղճ-  
 ընտանիքին: Երեակայեցէք. աւարտեց, եկաւ թէ չէ, իսկոյն  
 տեղ գտաւ, հասոյթը ամսէ ամսիս աւելացաւ, և այժմ նրա եր-  
 կու ամսուայ եկամուտը աւելի է, քան իմ մի ամբողջ տարուայ  
 աշխատանքի վարձատրութիւնը...  
 Բժ. Դա յանցաւոր անտարբերութիւն է: Օ՛, մեր ժամա-  
 նակուայ այդ փողի մեծարանքը, շուտ հարստանալու այդ բուռն  
 տենչանքը ահազին ծաւալ է ստացել... (Գալիս են Եղիսաբէթը և  
 Ֆլորան.)

ՏԵՍԻԼ 6.  
 Միքայէլ, Բժիշկ, ՁԼՈՐԱ, ԵՂԻՍԱԲԷԹ.  
 Բժ. Մայրիկ, ես ուզում եմ քեզ հետ մի լաւ կոխւ անել:  
 Սյու հիւանդ անդովդ ի՞նչ բան ունիս խոհանոցում: Կեանքիցդ  
 ձեռ ես վերցրել:  
 ԵղիՍ. Հիմա լաւ եմ, բժիշկ: Շնորհակալ եմ, բաւական  
 նեղութիւն տուի ձեզ:  
 Բժ. Զէ որ ես արգելել էի քեզ խոհանոց մտնել: Դեռ  
 կարգի չես ընկել: Ա՛յ, հէնց այս բռպէիս անքանքում ես: Մար-  
 բիկ, տես, կը մնունես, մեղք ես: Սկսր գու մեր մայրիկն ես: Ել  
 ով մեզ համար այնպիսի հրաշալի զաթաներ կը պատրաստի:  
 ԵղիՍ. Այ բժիշկ ջան, ի՞նչ անեմ, համբերութիւնս չի տա-  
 լիս, անող չը կայ:  
 Բժ. Ինչու, խոհարար չունիք:  
 ԵղիՍ. Ո՞րսեղից է:  
 ՁԼ, Մայրիկ, մենք հօ կանք. ես, աղջկերքը:  
 Բժ. Այս էլ հարսդ: Տեսնում ես, մայրիկ:  
 ԵղիՍ. Դեռ ջահիլ են, այ բժիշկ, մեղքս են գալիս, չեմ  
 ուզում շատ նեղացնեմ:  
 Բժ. Իզնոր, իզնոր: Թնդ նրանք էլ սովորեն: Զէ որ նը-  
 րանք էլ ժամանակով իրանց տուն ու տեղը կ'ունենան, տան-  
 ափիններ կը զանան:  
 ԵղիՍ. Ես էլ հէնց նոր էի վեր կացել:  
 Բժ. Ինչիլիցէ: Բայց այսուհետե, տես, էլ մի ամբողջ շա-  
 րաթ խոհանոց չես մտնի: Սենեակում կարող ես ման գալ. յոդ-  
 նեցիր, կը պատկես: Միքայն թէ ձեսդ բանի չես տայ, և խոհա-  
 նոց—ոչ մի կերպ: Հասկացար, մայրիկ:  
 ԵղիՍ. Ինչպէս հրամայում ես, բժիշկ, էնոլէս էլ կ'անեմ:  
 Բժ. Է՛հ, հիմա ասա, տեսնեմ, ախորժակդ տեղն է:  
 ԵղիՍ. Գոհութիւն Ասածոյ, զանդատաւոր չեմ:  
 Բժ. Անընութիւնդ անցել է:  
 ԵղիՍ. (Հարցական հայացքով նայում է Ֆլորային):  
 ՁԼ, Բժիշկը հարցնում է, հիմայ լաւ ես բնում:  
 ԵղիՍ. Փառք Ստեղծովին, քունս տեղն է: Վերջին ան-  
 գամուայ տուածդ դեղը շատ օգնեց:  
 Բժ. Ալա մի զարկերակդ նայեմ: (Նայում է) Հիմա դադը-  
 րած չես, մայրիկ: Զես կամենում պառկել:  
 ԵղիՍ. Հա, շատ շուտ եմ բէզարում:

տայց... ինչ կոփեներ, ինչ ընտանեկան փոթորիկներ... Բայց  
ևս—տարայ յաղթանակը:

ՄԻՔ. Դուք բախտաւոր կը լինիք, ինձ թւում է: Կամքի  
ոյժ, նիւթական ապահովութիւն... Բայց ինչո՞ւ կանդնած ենք:  
Եսաւեցէք, խնդրեմ: (Ասում են) Օ՛հ, ես այնպէս դադրած եմ:

ՄԱՆ. Պարհն Միքայէլ, ամիկինը ասաց, որ դուք այժմ  
ծառայում էք:

ՄԻՔ. Այն, ծառայում եմ:

ՄԱՆ. Եւ ձգել էք վրձինը:

ՄԻՔ. Տէր մի արասցէ... Բայց ես ներկայումս այնպիսի  
վատ պայմանների մէջ եմ, որ զուցէ աւելի լաւ կը լինէր թող-  
նել ամենեին: Օրուայ ամենաթարմ ժամերս վատնում եմ դրասե-  
նեակում, ուր համրիչների չխկչնեցը կատաղեցնում է ինձ,  
նեարդերս քայլայում:

ՄԱՆ. Բան չ'ունիք դուք էլ, պարհն Միքայէլ: Թո՞ղ կորչի  
այդ ամենը Ծառայեցէք ձեր միակ աստուածութեան:

ՄԻՔ. Եւ ես լուրջ մտածում եմ այդ մասին: Այսպէս եր-  
կար տեսլ չէ կարող իմ զրութիւնը: Ես... մի բան կ'անեմ...  
ես—վերջ կը տամ...

ՄԱՆ. Զեր եղբայրը, լսել եմ, լաւ պաշտօն ունի, միջոց-  
ների տէր է: Միթէ նա ձեզ չէ օգնում:

ՄԻՔ. (Գէմքի վրայ խիստ դժգոհութիւն) Իմ եղբայրը... (Մի կողմ) Ես եղբայր չ'ունիմ...

ՖԼ. (Ման.-ին) Խնդրում եմ, եղբօր մասին չը խօսէք: Սնունն  
անդամ զայրացնում է:

ՄԱՆ. Միթէ:

ՖԼ. Այն, խնդրում եմ:

ՄԱՆ. (Կարծատեւ լուսթիւն) Պարհն Միքայէլ, ոոր ոչինչ չ'ու-  
նկարած:

ՄԻՔ. Կայ մի նոր բան: Բայց ես ամաչում եմ ցոյց տալ:  
Լսենք սակայն ձեր կարծիքը: (Գնում է պատկերակալի մօտ) Եթէ  
ցանկանում էք իմանալ, թէ ինչ կարող է անհն մի գեղարուես-  
տագէտ մարդ յոդնած ձեռքով և կոտրուած սրտով, ահաւասիկ  
(Վերցնում է քողը)—նայեցէք:

ՄԱՆ. (Ուշադրութեամք նայում է եւ զլուխը թափանարում):

ՄԻՔ. Չէք հաւանում:

ՄԱՆ. Կը ներէք ինձ, պարհն Միքայէլ, բայց ես պէտք է  
անկեղծ ասեմ, որ դուք երբէք սրանից աւելի անդոյն, անկեն-  
դան, սառը, մի խօսքով, աւելի անյաջող գործ չէք արտադրել:

ՄԻՔ. Շատ ուղիղ է: Ես ձեզ հետ համաձայն եմ: Եւ մի  
հրաշք կը լինէր, եթէ ես իմ այժմեան անհնարին հանդամանք-

ՍԱԹ. Վերջապէս եկամր, Վահանն:	Համարեա միասին:
ՎԱՐՍ. Եյս որ խաչիցն է, Վահանն:	

ՍՆ. Ի՞նչպէս եղաւ մեղ, մտարերեցիր, Վահանն:

ՎԱՀ. (Ծիծաղելով) Ես որ մէկիդ պատասխանեմ:—Իսկ դուք  
ուր էիք, քոյրիկներս:

ՍԱԹ. Հարեանների մօտ:

ՎԱՐՍ. Թուղթ էինք խաղում:

ՎԱՀ. Թո՞ւղթ: Աւելի լաւ զբաղմունք չը դատար:

ՎԱՐՍ. Զանձրանում ենք, Վահանն:	Սնուանելի է մեր կետնքը:
-------------------------------	----------------------------

ՍԱԹ. Իսկ դու իբր թէ չես խաղում, չք:

ԱՆ. Օ՛, այն էլ ի՞նչպէս...

ՎԱՀ. Իմ բանը ջնկ:

ՍԱԹ. Անցեալ օրը ով էր կլուբում երկու հարիւր տարել:	ՎԱՀ. Ես: Բայց դուք որտեղից իմացաք:
--	------------------------------------

ՎԱՐՍ. Սատանան լուրը բերաւ: (Ծիծաղում են)

ՎԱՀ. Թոյլ տուելք ինձ հարցնել, ինչո՞ւ այդպէս պինդ- պինդ փաթաթուել էք շալերի մէջ: Մրսում էք:	ՎԱՐՍ. (Ցնցում է) Ես գողում եմ:
---	--------------------------------

ՎԱՀ. Այնքան էլ ցուրտ չէ այստեղ:

ՍԱԹ. Ի՞նչպէս թէ ցուրտ չէ: Դուրսը սառնամանիք, բուք- բորան, իսկ մենք երկու օր է վառարանը չենք վառել:	ՎԱՀ. Ի՞նչո՞ւ:
---	---------------

ՍԱԹ. Փայտնիրս հատել է:

ՎԱՀ. Հատել է:

ԱՆ. Լաւ, դու ինչո՞ւ մեզ մօտ չէիր գալիս, հա, Վահանն:	ՍԱԹ. Բան ասաց: Գայ ինչ անի: Մեր կոփեներին է կա-
---	---

րոս, թէ մեր ախուվախին: Ափսոս չէ մենակ. հոգսերից ա- զատ, զլուխը հանգիստ...	ՎԱՀ. Օ՛, Աստուած ազատի Սաթօի թունաւոր լեզուից. կարիճի նման խայթում է:
--	--

ՎԱՐՍ. Վահանն, դու չը գիտէիր, որ մայրիկը հիւանդ է:

ՎԱՀ. Ես միայն երեկ իմացայ, այն էլ պատահմամբ: Ապա մի գնանք մայրիկին տեսնենք:	ՍԱԹ. Հիմա մայրիկը ինչքան պիտի ուրախանայ... (Գը- նում է, նրա ետեւից՝ Վահանը, Վարսենիկը եւ Աննան: Գալիս է Միքայէլը ներկապնակը ծերին: Ընտրում է վրձիններից իր ցանկացածը եւ կանդ- նում պատկերակալի առաջ:)
--	--

ՏԵՍԻԼ 10.

ՄԻՔԱՅԵԼ (Մենակ).

Մանասեանի կարծիքը լուելուց յետոյ՝ այս պատկերն աւելի ես ընկաւ իմ աչքից; Շատ ձշմարիտ է. «անկենդան, անդան և սահը»: Եւ արժէ միթէ աւարտել այս գործը: Աւելի լաւ չէ ոչնչացնել յոդնած երեակայութեանս այս բանազրօսիկ ծնունդը: Ոչնչացնել և սկսել նորից: (Վայր է դնում ներկապնակը եւ վրձինը:) Այս, ինչ որ դեռ ես եփուած, հասունացած չէր այստեղ (Յոյց տալով գլուխը), ես կամեցայ բռնութեամբ դուրս կորզել և դնել կատի վրայ:—Եւ ահա հետեանքը: Այսպէս է վրէժինդիր լինում գեղարուեսում այն անձից, որ նրան դաւածանում է, յանկանալով երկու աստուածութեան միաժամանակ ծառայել...  
(Դրան մէջ երեւում է Ֆլորան):

ՏԵՍԻԼ 11.

ՄԻՔԱՅԵԼ, ՖԼՈՐԱ, յետոյ ՎԱՀԱՆ, ԱՆՆԱ, ՎԱՐՍԵՆԻԿ և ՍՍԹԵՆԻԿ.

ՖԼ. (Դէպի ետ նայելով) Միքայէլը:—Նա այստեղ է:

ՄԻՔ. Ֆլորա, ով է այստեղ:

ՖԼ. Խսկոյն կ'իմանաօ: (Մտնում են Վահանը եւ բոյրերը:

ՎԱՀ. Միքայէլ, բարե՛: (Մօտենում է ձեռք տալու: Միքայէլը իմաստ հայեացը ձգելով Վահանի վրայ, հեռանում է իր սենեակը եւ դուռ ետեւից գարկում: Նրա այս վարմունքը խիստ անխորժ տպաւորութիւն է գործում ամենքի վրայ: Ակզրում ամենքն էլ աաշած՝ իրար երեսի են նայում: Քոյրերը անբաւական են եւ միմեանց հետ փափում են: Ֆլորան իրան շատ անյարմար է զգում եւ իսոնարնել է զլուխը: Վահանի դէմքը նախ արտայայտում է շինծու ժպիտ, բայց զնալով աւելի եւ աւելի վրդովունք է ցոյց տալիս:)

ՖԼ. (Մի կողմ) Այս ինչ պատահեց նրան... Ա՛խ, Աստուած: (Գնում է:)

ՏԵՍԻԼ 12.

ՎԱՀԱՆ, ԱՆՆԱ, ՎԱՐՍԵՆԻԿ, ՍՍԹԵՆԻԿ.

ՎԱՀ. Այս ինչ է նշանակում:

ՎԱՐՍ. Երազ է տեսել...

ՎԱՀ. Միքայէլն իմձանից խորշում է... Փախչում, ինչպէս ժանտախտից... Զէ կամենում մինչեւ անգամ իմ բարեին պատախանել... (Դառը ծիծաղ) Ես չը զիտէի, ձշմարիտ, որ ես այդ աստիճան ատելի եմ նրա համար... Է՞հ, ինչ արած, զոռով սիրելի չես դառնայ... Ինձ մնում է այժմ զրլիարկն վերցնել այսպէս և հեռանալ այստեղից: (Ուզում է զնալ:)

ՎԱՐՍ. (Նրան պահում է:) Վահան, ի սէր Աստուած, ներիր նրան...

ՍՍԹ. (Նոյնպէս) Կայ, Վահան, խնդրում ենք...

ԱՆ. (Նոյնպէս) Մի զնա, մայրիկին խնայիք...

ՎԱՀ. Վահ, ինչպէս ես կարողացայ տանել այն վիրաւորանքը... թողէք ինձ: (Քոյրերը աշխատում են պահել:) Թողէք ինձ զնամ, կորչեմ այստեղից... Այս խայտառակութիւնից յետոյ ես մնում այստեղ, ես էլ կրկին հատ դնեմ այս տան շեմքին—երբէք և երբէք: (Շտապ զնում է: Քոյրերը արագ դուրս են վազում նրա հտեւից՝ կանչելով. «Վահան, Վահան, Վահան!... Մտնում է Ֆլորան՝ սրտնեղութիւնից սաստիկ յուզուած:)

ՏԵՍԻԼ 13.

ՖԼՈՐԱ (Մենակ).

Ի՞նչպէս բարկացած է Վահանը... Զեռքից պինդ բոնած պահում են, իսկ նա ետ է հրում իրանից... Նա զնաց... (Մօտենալով զրանը) Միքայէլ, Միքայէլ, շուտ արի այստեղ: (Գալիս է Միքայէլը:)

ՏԵՍԻԼ 14.

ՄԻՔԱՅԵԼ, ՖԼՈՐԱ.

ՄԻՔ. Հը, ինչ կայ, որ այգպէս զոսում ես: Ի՞նչ, է պատահել. հրդեհ, անբախտութիւն... Այս էլ Միքայէլը: Ասա, ինչ ես հրամայում:

**ՖԼ.** Միքայէլ, Վահանը հեռացաւ՝ սաստիկ վիրաւորուած...  
Գնա, հասիր ետեիցը, ետ կանչիր նրան, ներում խնդրիր...  
Միթ. Ի՞նչ...

**ՖԼ.** Ներում, ներում խնդրիր նրանից, որովհետեւ քո արա-  
ծը կոպառւթիւն, անքաղաքավարութիւն էր, Միքայէլ:

Միթ. Անքաղաքավարութիւն... (Աշխատում է իրեն զապել:) Այս, ես նրա հետ... մի քիչ... կոպիտ վարուեցի... ես այդ ըզ-  
գում եմ... Բայց ինչ անեմ, Թլհրա, սերտո շատ էր լցուած  
մաղձով, համբերութիւնս հատել էր, ես յանկարծ բռնկեցի: Ա-  
ռաջինը նա է, որ իմ եղբայրական զգացմունքը վիրաւորել է,  
յոյսերս ոտի տակ տուել. նա է, որ մեզ մատնել է կատարեալ  
անուշաղրութեան... Աւելի յաւ է, որ նա ինձ նման անքաղա-  
քավարի լինէր, կոպիտ լինէր, բայց ոչ այն աստիճան անտար-  
բեր գէպ իր հարազատ ընտանիքը, այն աստիճան անխիզն և  
անդգայլ...

**ՖԼ.** (Լալակին) Ա՛խ, Միքայէլ, այս ինչ արիր դու:  
(Նածկելով աչքերը՝ կամացուկ լալիս է:)

### ՎԱՐՍԳՈՅՐ

### ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Մի առանձնասենեակ Վահանի բնակարանում, որը կից է նրա ծառայու-  
թեան գրասենեակին: Արտաքին մուտքը նակատից, կողքի դռներից մէկը  
տանում է դէպի կացարանի ներսը, իսկ միւսը՝ դէպի գրասենեակը: Ա-  
ջակողմնան պատի մօտ մի գրասենան եւ քանի մի աթոռներ. գրասեղանի  
վրայ բոլոր անհրաժեշտ պարագաները, նոյնպէս եւ համրիչ, թղթեր, սե-  
ղանի զանգ եւայլն: Զախ կողմում դրուած է դիւան՝ իր կլոր սեղանով  
եւ բազկաթոռներով: Մի պատի վրայ կախուած է քարտէզ: Վարագոյրը  
բարձրանալիս՝ Վահանը՝ գրասեղանի մօտ նատած՝ համրիչի վրայ ինչ-որ  
հաշիւներ է տեսնում եւ գրում: Քիչ յետոյ գրասենեակի դռնից մտնում է  
Օհաննէսը եւ քանի մի թղթեր զնելով Վահանի առաջ՝ հեռանում է:  
Գլխաւոր դուռը մատներով բաղնում է մէկը: Վահանը ծայն է տալիս.  
«Մտէր»: Գրան մէջ երեւում է օր. Հոփիսիմէն՝ ուրախ ժախտը երեսին:  
Վահանը զարմացած վեր է կենում տեղից:

Ճամանակը՝ զարուն, երեկոյ, պայծառ եղանակ:  
Երկրորդ եւ երրորդ գործողութեան միջեւ անցել է մօտ մի տա-  
րի ժամանակ:

### ՏԵՍԻԼ 1.

### ՎԱՀԱՆ, ՀՈՒՓՍԻՄԷԿ.

**ՎԱՀ.** Այս ուժ եմ տեսնում... Օրիորդ Հոփիսիմէն...  
ՀՌ. Չէիք սպասում: Բարե ձեզ:  
**ՎԱՀ.** Բարե, բարե: Այս երր: Վաղուց է եկել էք:  
ՀՌ. Ո՛չ, այսօր երեկոյեան զնացքով: Կամեցայ ձերոնց  
մօտ զնալ, բայց տունը չը գտայ. բնակարանը փոխել են: Ուս-  
տի և չտապիցի ձեզ մօտ, որ նրանց հասցէն վերցնեմ:

ՎԱՀ. Նրանց հասցէն, իսկոյն, այս բռպէիս: Բ', ը', ի՞նչ-  
պէս է... (Մտածում է:)

ՀՌ. (Ծիծաղելով) Զերոնց հասցէն չը զիտէք:—Այ զարմա-  
նալի բան:

ՎԱՀ. Ո՛չ, զիտեմ, բայց փողոցի անունը մոռացել եմ:  
Սպասեցէք, իսկոյն կը մտաբերեմ: (Աշխատում է յիշել) Ա՛, յիշե-  
ցի, յիշեցի: իսկոյն թերթիկի վրայ կը գրեմ: (Գրում է) Ահա  
ձեզ մերոնց հասցէն:

ՀՌ. (Վերցնելով Թերթիկը) Շնորհակալ եմ: (Կարդում է) Իսկ  
մօտ է այստեղից:

ՎԱՀ. Ո՛չ, շատ հեռու է: Սա քաղաքի կենտրոնն է, իսկ նը-  
րանք կենում են համարեա քաղաքի ծայրումք: Մի եւ ընկած  
և խուլ փողոց է:

ՀՌ. Միթէ: Ուրեմն հիմա դժուար է դանել:

ՎԱՀ. Ես խորհուրդ կը տամ գնալ վաղը, ցերեկով:

ՀՌ. Հա, ուրեմն աւելի լաւ է գնամ վաղը: Բայց այնպէս  
կարօտել եմ Ֆլորային, մանաւանդ Հրանտին... Ի՞նչ հիանալի  
երեխայ է:

ՎԱՀ. Այս, շատ լաւն է:

ՀՌ. Միքայէլը ինքն է, որ կայ: Հիմա ի՞նչքան մեծացած  
կը լինի:—Մանկական պարտէզ յաճախում է:

ՎԱՀ. Կարծեմ, յաճախում է: Հօը, թէ ոչ: Ուզիղն ասած,  
օրինրդ, ես հաստատ չը զիտեմ:

ՀՌ. Երեխ, նրանց մօտ սակաւ էք լինուա:

ՎԱՀ. Այս, շատ սակաւ: Զբաղուած եմ:

ՀՌ. Լաւ եղբայրներ եք:

ՎԱՀ. Է՛հ, գներ ասացէք, գներ: Ի՞նչպէս էք, լաւ էք: Ա-  
ւարտեցիք արդեօք:

ՀՌ. Այս, վերջացրի:

ՎԱՀ. Ուրեմն հիմա կարգին բժիշկ էք:

ՀՌ. Ապագան ցոյց կը տայ:

ՎԱՀ. Յաջողութիւն եմ ցանկանում:

ՀՌ. Շնորհակալ եմ:—Հա, որպէսզի չը մոռանամ... (Չերքի  
քսակից հանում է մի ծրար) Ի՞նձ խնդրել են, որ այս նամակը  
ձեզ յանձնեմ: Զեր նախկին collega-ներիցն է: Ի՞նչ-որ ստա-  
նալիք են պահանջում ձեզնից:

ՎԱՀ. Կարծեմ, ձեզ կարելի էր աղատել այդ նեղութիւ-  
նից և ուղղակի փոստով ուղարկել:

ՀՌ. Երկու անդամ գիմել են, բայց չէք պատասխանել:  
—Այժմ ես...

ՎԱՀ. Դուք կամնում էք դնալ:

ՀՌ. Այս, ժամանակ է:

ՎԱՀ. Զեմ համարձակւում ձեզ պահեր:

ՀՌ. Յ'տեսութիւն (Գնում է):

ՎԱՀ. Յ'տեսութիւն, օրինրդ: (Վահանը բաց է անում ծրա-  
րը, կարդում, յետոյ բարկացած պատում է նամակը եւ ձգում զամբիւղի  
մէջ:) Զանձրացրին ի՞նձ իրանց դիմումներով... Գրել էի, որ  
կ'ուղարկեմ, և—վերջ: (Անում է հեռախոսի զանգահարութիւնը: Օհան-  
նէսը գալիս յայտնում է: «Ձեզ ինդրում են հեռախոսի մօտ»: Վահանը  
անցնում է զրասենեակը: Մտնում է բժիշկը:)

## ՏԵՍԻԼ 2.

ԲԺԻՇԿ, ՕՀԱՆՆԵՍ.

ԲԺ. Պարոն կառավարչին կարելի է տեսնել:

ՕՀ. Իսկոյն կը յայտնեմ (Գնում է):

ԲԺ. (Մենակ. նայում է պատուհանից) Պայծառ լուսնեակ զի-  
շեր... Ի՞նչ սիրուն է ծովի ծփանքը լուսնի չողերով... Ուր է  
Միքայէլը, որ այս բոլոր գեղեցկութիւնը պատրաստի վերցնէր  
և զնէր կտաւի վրայ... (Մտնում է Վահանը:)

## ՏԵՍԻԼ 3.

ՎԱՀԱՆ, ԲԺԻՇԿ.

ԲԺ. Ներեցէք, որ ես ձեզ խանգարեցի:

ՎԱՀ. Այդ ոչինչ:

ԲԺ. Կարող էք մի քանի բռպէ նուիրել ի՞նձ:

ՎԱՀ. Աւրախութեամբ: Նստեցէք, ինդրեմ (Նստում են):

ԲԺ. Պարմն թաշճեան, ես եկել եմ ձեզ մօտ մի շատ կա-  
րեսը գործով:

ՎԱՀ. (Առաջարկում է սիլար) Խնդրեմ:

ԲԺ. Շնորհակալ եմ: Ես չեմ ծխում:

ՎԱՀ. Հա, ինչո՞ւմ է բանը:

ԲԺ. Մէջտեղ լուծելու մի դժուար խնդիր կայ, և ձեզնից  
շատ բան է կախուած: Խօսքը ձեր եղբօր, Միքայէլի մասին է:  
Դուք, երեխ, իմացած կը լինեք, որ նա մի ամբողջ ամիս հի-  
ւանդ պատկած էր...

ՎԱՀ. Կարծեմ, նա հիմա վեր է կացել և զնում է ծառա-  
յութեան:

ԲԺ. Այս, գնում է, գնում է: Բայց նա տակաւին կազդու-

բուած չէ, դեռ ևս ստի վրայ հիւանդ է։ Գնում է ծառայութեան ակամայ և ստիպուած։

ՎԱՀ. Իղնւր։ Կը սպասէր, մինչի որ առողջութիւնը տեղը կը գար։

ԲԺ. Թոյլ տուէք ինձ յայտնել, պարհն թաշճեան, որ ներկայ պայմանների մէջ նա ոչ մի յոյս չէ կարող ունենալ, որ իր առողջութիւնը երբեք տեղը կը գայ։

ՎԱՀ. Ինչու։

ԲԺ. Նա յոդնել է, պարհն թաշճեան, և չափից դուրս յոդնել է։ Մի ուրիշը նրա տեղ գուցէ և զիմանար։ Բայց նրա կազմուածքը խիստ քնքոյց է, համարեա կանացի։ Ուժից վեր աշխատանքը, մանաւանդ որ դա նրա սրտովը չէ, խանգարել է նրա նեարդերը, քայլայել է։

ՎԱՀ. Կարծեմ, նրա պարապմունքը բաւական թեթի աշխատանք է։

ԲԺ. Սխալում էք, համարձակութիւն ունիմ այդ հաստատելու։ Օրուայ մնեծ մասը նա անց է կացնում գրասենեակի մթնոլորտի մէջ, ուր նրա ականջի տակ շարունակ լսելի են համրիչների աղջուկը, զրիչների ճաճոցը, հեռախօսի զանգահարութիւնը... Ահա մի այդպիսի մթնոլորտի մէջ—դրա վըրան աւելացրեք և ծխախոտից գոյացած մշուշը—Միքայելը բաժանակուած է ժամերով նստել գրասեղանի առաջ և կուացած գրել, պատուել, նորից զրել և այսպէս անվերջ, անվերջ... Բայց այդ դեռ բաւական չէ։ Երբ գալիս է տուն, զգում է, որ ջարդուած է, ուզեղի մէջ թմրութիւն, մէջքը ցաւում է, ձեռքը յոդնած։ Նրան հանդիսաւ է պէտք։ Բայց նա հանգստանալ չէ կարող։ Երա սիրաը լցուած է ստեղծագործութեան կարօտվ։ Նա շտապում է իր պատկերակալի մօտ, վերցնում է ներկապնակը, վրձինը. կամենում է գոնէ մի վայրկեան մտնել սպեւրութեան, մտորումների աշխարհը... Բայց—թոյլ մատները չեն գորում ամուր բռնել վրձինը, ձեռքը գողում է, վրձինն ընկնում է գետին, և այսպէս իր տենչանքը մնում է անկատար... Դուք կարող եք երեակայել, թէ դա ինչ սոսկալի դրութիւն է նրա համար։

ՎԱՀ. Այդ գէպքում աւելի լաւ է բոլորովին թողնել այդ անային աշխատանքը։

ԲԺ. Բայց դա մի հասարակ տնային աշխատանք չէ, որ հեշտ կարելի էր թողնել։ Հարցրեք ձեր եղբօրից, և նա կ'ասէ, որ դա իր սէրն է, իր միթարութիւնն, իր կեանքի նոպատակը։

ՎԱՀ. Շատ կարելի է։

ԲԺ. Այժմ ես ձեզ յայտնեմ, թէ ինչ դիտաւորութեամբ եմ եկել ձեզ մօտ։

ՎԱՀ. Այդ դժուար չէ գուշակեր—Ասացէք։

ԲԺ. Բոլոր խնդիրը նրա մէջ է, որ մենք Միքայէլին փրբեանք։ Նրան անհրաժեշտ է ֆիզիկական և մտաւոր հանգստութիւն, այլապէս նա կ'ունենայ մի շատ տիսուր վախճան։

ՎԱՀ. Դուք—ինչ միջոց էք առաջարկում։

ԲԺ. Նախ և առաջ թողնել իր ներկայ պաշտօնը և առհասարակ ամեն մի աշխատանք. յետոյ ամառուայ այս քանի ամիսը, որ առաջներիս է, փոխադրուել մի զիւղ տեղ, մի խաղաղ անկիւն, ուր օղը մաքուր է, ջուրը առողջարար, չորս կողմ անդորրութիւն և յուզիչ ոչ մի բան, մի խօսքով, նրան աղատել բոլոր հոգակրից և շրջապատել կեանքի բոլոր յարմարութիւններով։

ՎԲՀ. Այդ լաւ կը լինի։

ԲԺ. Բայց այս բոլորն իրագործելու համար՝ անհրաժեշտ է ձեր եղբայրական առատաձեռն օգնութիւնը... Ներեցէք, ձեր զլուխը ցաւում է։

ՎԱՀ. Ո՛չ ինչու հարցրիք։

ԲԺ. Որովհեան դուք այնպէս պինդ սեղմեցիք ձեր ձականը։

ՎԱՀ. Ես զիխացւ չունիմ։

ԲԺ. Ա՛, ուրեմն սխալուել եմ... Հա, ձեր անկլիքը պարզ է։ Զեզ մնում է այսուհետե, իհարկէ, ասմամանակ, մինչի որ Միքայէլը բոլորովին կը կազդուրուի, մեն-մենակ ձեր ուսերի վրայ կրել ընտանիքի պահպանութեան բոլոր ծանրութիւնը։

ՎԱՀ. (Հոգեց, ծանր շնչառութիւն, զլուխը մտախոն յենում է ձեռքի վրայ)։

ԲԺ. Ես զիխեմ, որ այս առաջարկութիւնը խիստ ծանր կը թւայ ձեզ... Բայց ինչ արած, պարհն թաշճեան, աշխարհն այնպէս է։ Մարզիկ իրենց շահերով և պարտականութիւններով կալուած են իրար հետ, աղատուել միջավայրից—հնար չը կայ։

ՎԱՀ. Ասացէք, ինչպեմ, դուք եկել եք ինձ մօտ իմ եղբօր կողմից, թէ...։

ԲԺ. Քաւ լիցի։ Ես եկել եմ ձեզ մօտ ոչ թէ իրրե ուղարկուած միջնորդ, ոչ, այլ բոլորովին յօժարակամ, ինքնարերարար, առանց զրգման որեէ մէկի կողմից, զեկավարուելով միայն իրզ-ձիս թելազրութեամբ, որ ինձ ստիպում է ամեն միջոց գործ գնել՝ վրձելու Միքայէլ թաշճեանին, մի անձի, որը ոչ միայն իմ բարեկամ է, այլ և ամենքից ծանաչուած մի տաղանդ, որի կորուսը անչափ զգալի պիտի լինէր մեր նորատի զեզա-

բուեստի համար: Այն ընտիր դէմքերից մէկն է նա, որոնք իրենց փառքով աւելացնում են նաև իրենց միջավայրի փառքը և պարծանքը:

ՎԱՀ. Բայց ես զարմանում եմ: Եթէ, իրաւ, նա կարօտ է իմ շուտափոյթ օգնութեան, ինչու անձամբ ինքը չէ դիմում ինձ ե...

ԲԺ. Ներեցէք, որ ես ձեզ ընդհատում եմ: Ասացէք, իւղնդրեմ, երբ մենք տեսնում ենք, որ մէկը մեր աչքի առաջ խեղդրւում է, մանաւանդ եթէ դա մեր մի հարազատն է, միթէ մենք սպասում ենք, որ նա օգնութիւն հայցէ, և ապա միայն վազենք փրկելու...

ՎԱՀ. Ինչ վերաբերում է իմ օգնութեան, ես, իրարկէ, կ'օգնեմ... դա իմ պարտականութիւնն է... Ես այդ չեմ ուրանում, բայց... բայց...

ԲԺ. Բայց ինչ:

ՎԱՀ. Ես չը գիտեմ, թէ ոյժս կը պատի արդեօք մի այնպիսի ծանրութիւն վերցնել...

ԲԺ. Յոյս ունիմ, որ ձեր ոյժը կը պատի:

ՎԱՀ. Ես կը մտածեմ, բժիշկ:

ԲՄ. Մտածեցէք, մտածեցէք, պարհն թաշճեան: Խնդիրը այնքան ծանրակշուն է, որ արժէ նրա վրայ նոյն իսկ զլուխ կոտըրել: Մէջ տեղ կեանքի և մահուան հարց կայ:

ՎԱՀ. Բժիշկ, միթէ, իրաւ, այդ աստիճան վտանգաւոր է Միքայէլի հիւանդութիւնը:

ԲԺ. Սրափ արաւ է: Մահը քայլառքայլ հետեւմ է նրան, որպէս իր անբաժան ստուերը: Բաւական է մի յարմար ասիթ— և ամեն ինչ վերջացնեաւ:

ՎԱՀ. Այս:

ԲԺ. Այն, այն, անտարակնյա: Աշխատենք փրկել նրան, քանի գեռ ուշ չէ: Հաւատացէք ինձ, ոչ միայն բարոյական պարտականութիւնը, այլ նոյնիսկ (խորհրդաւոր կերպով) ձեր անձնական շահը պահանջում է, որ շուտով նրան ձեռք մենքնեք և ստի կանգնեցնեք:

ՎԱՀ. Ես այդ հասկանում եմ:

ԲԺ. Շատ ուրախ եմ: (Վեր է կենում) Այժմ թայլ տուեք ինձ հրաժեշտ առաջ ձեզ:

ՎԱՀ. Յահեսութիւն: (Բժիշկը զնում է: Վահանը տխուր է եւ մտադրալ: Կրկին նատելով սեղանի մօտ՝ զրիշն առնում է ձեռք, բայց ոչինչ չէ զրում, աչքերը կանգնած են մի կէտի վրայ. նա մտամոլոր է եւ չը գիտէ, թէ ինչի համար է վերցրել զրիշը: Քիչ յետոյ նա զայրոյթով զրիշը նետում է մի կողմ, հոգւոց է հանում եւ տենդոտ քայլերով սկսում

է անցուղարձ անել: Դուռը բացում է, եւ տնբտնքալով ներս է մտնում նրա մայրը՝ Եղիսաբէթը՝ մէջքը մի փոքր կրացած, կրմնած իր գաւազանին: Նրան տեսնելուն պէս՝ Վահանը բացազանջում է, «Վահ», մայրի կա... շտապում է ընդ առաջ եւ ձեռքիցը բռնելով՝ բերում նստեցնում է դիւանի վրայ:)

#### ՏԵՍԻԼ. 4.

ՎԱՀԱՆ, ԵՂԻՍԱԲԷԹ:

ՎԱՀ. Հը, յոզնել ես, մայրիկ:  
ԵՂԻՍ. Ծնկներս կոտրւում են: (Նստելիս) Վահ, վայ նանի...  
ՎԱՀ. Տեղս շատ բարձր է, համ, մայրիկ:  
ԵՂԻՍ. Բարձր ես ասում ու թողնում... Ինչ մենք որ...  
(Թեթեւ հաղի:)

ՎԱՀ. Հը, բնչակէս ես, մայրիկ: Հօ էլ չես հիւանդացել:  
ԵՂԻՍ. Է՞ն, իմ բանը եօյա կ'երթայ, էսօր կամ, վաղը լը կամ: Դժու ոնց ես, գոււ...

ՎԱՀ. Մենք էլ ապրում ենք էլի, մայրիկ, քաշ ենք դալիս:  
ԵՂԻՍ. Է՞ն-վախս...

ՎԱՀ. Մի զոչաղ կաց է, մայրիկ: Ի՞նչ ես ախուվախդ զցել: Կարծես հարիւր տարեկան պառաւ լինիս:

ԵՂԻՍ. Է՞ն, որդիս... Հարիւր տարեկանն էլ ինձնից ջահիլ է: Ես էսպէս շուտ ծերացողը չէի, դնուք ինձ պառաւայրիք:

ՎԱՀ. Ո՞վ, մենք:  
ԵՂԻՍ. Համ, որդի ջան, գուք, դնուք, իմ որդիքը:

ՎԱՀ. Ա՞լս, մայրիկ, գոււ միշտ, միշտ գանգատաւոր ես

մեզնից:  
ԵՂԻՍ. Զեր դարդիցը, ձեր անսէրութիւնիցը ես էսպէս կուչ եկայ, գունդուկծիկ դառայ: Դուք որ սէրով եղբայրներ լինէինք, իմ կեանքի վրայ նոր կեանք կ'աւելանար, բայց, (հոգւոց) ամիս...

ՎԱՀ. Մայրիկ, ի սէր Աստծոյ, թնդ այդ ախ քաշելդ. մարդու սիրտ է մաշում, հաւատա ինձ:

ԵՂԻՍ. (Կարմատն լուսթիւնից յետոյ) Այ վահան, այ որդի ջան, ախր ասա տեսնեմ, իմ մեկ մօտ չես զալիս, հը: Զես ասում, էնտեղ մայր ունիմ, քոյքեր ունիմ, եղբայր ունիմ, մի գնամ տեսնեմ, կենդանի են թէ մեռած են: Մեր տունը հարամի տուն է, որ չես ուզում ոտ դնես:

ՎԱՀ. Մայրիկ, Աստծուած վկայ, ժամանակ չի լինում: Հազարումի գործեր կան... Այ, նայիր:

Եղիս. Է՛ն, որդիս... Ասա, սիրտ է սառել մեղանից:  
ՎԱՀ. Ի՞նչպէս թէ սառել:

Եղիս. Մի մարդու սիրտ որ իր օջաղի վրայ տաք լինի,  
նա ժամանակ միշտ կը գտնի: Բայց չէ, դու ուրիշ բանի վրայ  
ևս տաքացել:

ՎԱՀ. Ի՞նչի վրայ, մայրիկ:

Եղիս. Ուշումհարդ տուել ես փողին ու մեղ մոռացել ես,  
որդիս: Մի անգամից ես ուզում միլիոնի տէր դառնաս:

ՎԱՀ. Ի՞նչ ասեմ, մայրիկ: Շատ ուղիղ է քո ասածը: Կեց-  
ցես: Դու ինձ հասկացել ես: Այս, ես վճռել եմ հարստանալ,  
միլիոնի տէր դառնալ: Եւ ի՞նչ... Դու այդ մեղը ես համարում:  
Նայիր չորս կողմոց, վերցրնե, ում կ'ուզես, քանի անուն ես ու-  
զում, տամ: Բոլորը, բոլորը իրանց ուշումիարը տուել են  
հարստանալուն, և շատերին յաջողւում է: Յիմարը մենակ Բս  
եմ, ի՞նչ է:

Եղիս. Ես էդ չեմ ասում, որդիս: Իհարկէ, խելօքը նա է,  
ով կարողանում է փող դատել, ով իր ապագայի վրայ մտածում  
է: Աշխարհ է. հեռու քեզանից, հեռու մեղանից, սև օրեր են  
պատահում, մարդ նեղութիւնների մէջ է ընկնում... Բայց իմ  
ասածը ուրիշ բան է:

ՎԱՀ. Քո ասեն այն է, թէ ինչո՞ւ ձեզ մօտ չեմ գալիս,  
համ:

Եղիս. Մենակ չը գալդ է: Մեզ թշնամու պէս աչքիցդ  
զցել ես, որդիս, օտար մարդիկ (լալալին) քեզանից աւելի են  
սրտացաւթիւն անում մեղ համար:

ՎԱՀ. Դու էլ շատ լաւ զիտես, մայրիկ, թէ ինչո՞ւ էլ չեմ  
ուզում գալ ձեզ մօտ, և թէ ինչու սիրտս կարուեց ձեր անից...  
Ես մոռացել էի, ինչու կրկին միտս զցեցիր այն տեսարանը, որ  
թիմ ներս տակնուցրայ արտ ու սիրտս լցրեց մաղձով, դառ-  
նութեամբ... Երբ ես վերջին անգամ եկայ ձեզ մօտ այցելու-  
թեան, դու չը տեսար, բայց բոյրերս վկայ են, թէ ինչպէս ինձ  
ընդունեց Միքայէլը... Նա չուզեց մինչե անգամ իմ բարեին  
պատասխանել, արհամարհանքով երեսը դարձրեց ինձնից, ան-  
ցաւ իր սենեակը և դուռն ամուր զարկեց ետեիցը!... Վիրաւո-  
րանքը սոսկալի էր, արիւնը զիլիս տուեց, ես ինձ հազիւ զըս-  
պեցի... Եղբայրս չը լինէր նա, բանը վերջացած էր: Ես նրան...  
ես նրան... իսկոյն հեթ... Է՛ն, լաւ է թողնենք այս... Ամեն  
անգամ, երբ յիշում եմ, կատաղութիւնս զալիս է, ես... և... չը  
զիտեմ, թէ ինչ անեմ, որ սիրտս հովանայ...

Եղիս. Վայ ինձ, վայ ինձ... Մի մայր երկու որդի ունե-  
նայ, երկուսն էլ ուսումով, պատառվ, ու մօր աչքերի արտա-

սուքը չը ցամաքի՞, մի ուրախ օր չը տեսնի խեղճը, նստի ու  
սև բուփ նման վայ այ իր զիլին...

ՎԱՀ. Է՛ն, լաւ, բաւական է: Հիմա ասելու ինչ է, ասա,  
տեսնեմ:

Եղիս. Ասելս էն է, ինչ որ ասում եմ:

ՎԱՀ. Տանը ինչպէս էք կառավարուում:

Եղիս. Է՛ն, վայ մնր կառավարուելուն:

ՎԱՀ. Զօ փողի նեղութիւն չէք քաշում:

Եղիս. Բա ինչ, առանց զրան: Մի տանտէր էլ ունինք,  
Աստծու պատիժ է դառել մեր զիլին:

ՎԱՀ. Ինչո՞ւ: Քրեհի համար, երեխ, նեղացնում է:

Եղիս. Նեղացնում է նեղացնելու պէս: Մի երկու ամ-  
սուայ քրեհը մնում էր. էլ հանգստութիւն չ'ունինք նրա ձե-  
սիցը: Գնալ-գալով հոգիներս հանեց: Ո'չ առաւօտ է հարցնում,  
ոչ իրիկուն. Ժամանակ-անժամանակ տուն է մանում, հացի վր-  
բիցը վեր կացնում, քնատելից զարթեցնում է... «Փողս տուէք,  
որ, փողս տուէք», ասում է, «թէ չէ զանգատ կ'անեմ»: Ու վեր-  
ջումն էլ իր ասածն արաւ անիծուածը:

ՎԱՀ. Գանգատ է տուել:

Եղիս. Վաղը չէ, միւս օրը Միքայէլը դատարան է կան-  
չուած: Խեղճի ձեռին էլ փող չը կայ, որ բերանը ծեփի, ու մը-  
նացել է ձեռքը ծոցումը...

ՎԱՀ. Ինչո՞ւ ինձ չէիք զիմում: Ես կը տայի, ինչքան հար-  
կաւոր է:

Եղիս. (Խոր հոգւոց) Է՛ն, որդի ջան... Սիրտս լցուած է, լի-  
զուս կարծ... (Վեր է կենում:)

ՎԱՀ. Ինչո՞ւ վեր կացար, մայրիկ:

Եղիս. Գնամ կամաց-կամաց:

ՎԱՀ. Մի քիչ սպասիք: (Գնում է սեղանի արկող բաց անում  
եւփող վերցնելով՝ բերում առաջարկում է մօրը:) Ա՛ռ, մայրիկ, մի քիչ  
փող տամ քեզ:

Եղիս. (Չեռքի մերժողական շարժումով) Զէ, չէ, չէ... Ես զրա-  
մար չեմ եկել քեզ մօտ... Ինձ միայն ձեր սէրը, ձեր համահ-  
ձայնութիւնն է պէտք...

ՎԱՀ. Այ ձեզ անտեղի հպարտութիւն: Իսկ տան քընէը,  
իսկ տանտիբով գանգամար: Ուրախ կը լինիք, եթէ նա վեր զըս-  
րել այց ձեր կայքը, ձեզ սնանկ յայտարարի: Ամօթ չէ սնդ հա-  
մար: Մի ժամանակ Թաշեանների անունը պատաւուր բաղա-  
քացիների շարքումն էր յիշում, հիմա մենք ինչպէս թոյլ տանք,  
որ մեր անունը աշխարհի առաջ անարգուի... Վերցրնե, մայրիկ.

գու այս փողը կը տաս Միքայէլին, նա էլ տաճտիրոջ կը յանձնի:

ԵղիՍ. Անհնդ կաց: Նա շատ անդամ է փորձանքի մէջ ընկել ու, փառք Աստծուն, մրցա էր անվեսա ազատուել է: Միքան կ'անի: Պատկերն էր ուզում ուղարկել մէկին...

ՎԱՀ. Ախր ինչու չես ուզում վերցնել, մի ասա, տեսնեմ:

ԵղիՍ. Եղբայրդ չի ընդունի... Դու նրան չես ճանաչում, վահան, չես ճանաչում... Եթէ գու մեր բարին ես ցանկանում, եթէ գուք քեզ մերն ես համարում, գու էս տեսակ ողորմութիւնը կը թողնես ու ինքդ բո ստովդ կը դաս մեզ մօտ, կը հաշտուես եղօրդ հետ, դու նրանից ներողութիւն կը խնդրես, նա քեզանից... Էն ժամանակ միայն կ'ասեմ, որ որդիս կորած էր ու գտայ: Ու էն ժամանակ եղբայրդ էլ ոտի կը զանդնի, խեղճ եթիմներիս բախտն էլ կը բացուի, ես էլ վերջապէս մի օր կը տեսնեմ: (Կամաց-կամաց գնում է:)

ՎԱՀ. Ապասիր, մայրիկ, թնդ կառք բերել տամ: (Սեղանի դանդը տալիս է. դալիս է Օհաննէսը:) Մօրս ճանապարհ դիր մինչև փողոց: Մի լաւ կառք կը վարձես, փողը կը տաս կառապանին, մայրիկիս կը նստեցնես և կ'ասես, ուր տանի:—Մայրիկ, ես փազը ձեզ մօտ եմ:

ԵղիՍ. (Ուրախ) Ի՞նչ տասցիր, որդիս, կրկնիր մէկ էլ:

ՎԱՀ. Մայրիկ, վազը—ես ձեզ մօտ եմ:

ԵղիՍ. Վահան, եթէ չ'եկար, դու էլ իմ որդին չես! (Եղիսաբէթը զնում է: Վահան՝ դրան մօտ կանգնած՝ նայում է մօր ետեւից, մինչեւ նրա իջնելը. նրա դէմքը խիստ մտախոն արտայայտութիւն է ստացել:)

### ՏԵՍԻԼ 5.

#### ՎԱՀԱՆ. (Մենակ)

Եղբօրս հետ հաշտուելը դարձել է անհրաժեշտութիւն: Ուզիդ է, նա ինձ վիրաւորեց և ասատիկ վիրաւորեց իր սպանիչ արհամարհանքով, բայց իսկապէս չը որ ես էի նրան տեղիք տուել... Արագ հարստանալու անիծեալ կիրքը, որ ընդհանուր է այժմ, փարակեց և ինձ, և ես իմ անտարբերութիւնը դէպ իմ թշուառ դերդաստանը հասցրի ծայրայեզ անդթութեամ... Շատ ճշմարիտ են բժշկի խօսքերը. «Անջատուել միջավայրից — հնար չը կայ!» Որքան կ'ուզես, ծրագիրներ կազմիր, օդային ամրոցներ կառուցիր—իզնուր է բոլորը. կեանքը հողմանալած ուրուականի պէս

հասնում է ետեիցդ, ցրիւ է տալիս գեղեցիկ ծրագիրներդ, կործանում է օդային հոյական ապարանքդ, և—վերջ անուրջներիդ!.. Ո'չ, կատարեալ անկման չը պէտք է համակը: Սթափու եմ, քանի դեռ ուշ չէ:—Մաքուր խիզը և բարի անունը—ամենից առաջ!

#### ՎԱՐԱԳՈՅՔ

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՀՈՐՌՈՐԴ

Նկարիչ Թաշճեանի բնակարանը (ոչ նախկինը): Գլխաւոր մուտքը ճակատից: Սենեակի պատուհանները փոքր են, զգացում է մաքուր օդի եւ լոյսի պակասութիւն, որովհետեւ պատուհանների առաջ հազիւ երկու արշին հեռաւորութեան վրայ բարձրանում է հարեւան տան պարիսպը, ծածկելով արեւ եւ նորիղոն: Սարցուկարզը միւնոյն է, բայց աւելի հնացած: Ֆլորան կարգի է բերում զրասեղանի իրերը եւ մաքրում փոշին, իսկ Սաթենիկը ջրում է ծաղիկները: Ճամանակը—հետեւեալ օրը, զեղեցիկ առաւօտ:

### ՏԵՍԻԼ 1.

ՅԱՐԱՐԱ, ՍԱԹԵՆԻԿ, յետոյ Ն.-ի ԳՈՐԾԱԿԱՏԱՐԲ.

ՍԱԹ. Դուրսը հրաշալի գարուն է, արեր պայծառ, օրը սքանչելի: Հիմա ամեն տեղ ծառ ու ծաղկունք՝ նոր կեանք առած՝ արագ աճում, ծաղկում, փարթամանում են... Միայն իմ ծաղիկներս են, որ թմրած մնացել են և չեն կենդանանում...

ՖԼ. Լոյսի պակասութիւնիցն է, ես կարծում եմ: Մի ծաղիկ, որ արեի երես չը տեսնի, իհարկէ, դրանց օրը կ'ընկնի:

ՍԱԹ. Արգէն եապօնական վարդս տերեները թափել է, մնացել է ցողունը, ոեհանն էլ կամաց կամաց թառամում է... Ափսնս իմ ծաղիկներ... (Զրում է:)

ՖԼ. (Կարճատու լուսթիւնից յետոյ) Սաթօ, ուղիղ ես ասում, որ այսօր Վահանը պիտի գայ մեզ մօտ:

ՍԱԹ. Քա, իհարկէ, մայրիկից հարցընւ:

ՖԼ. Ի՞նչ հրաշալի բան—գայ. Միքայէլի հետ հաշտուեն...

ՍԱԹ. Ի՞նչպէս անհամբեր սպասում եմ նրա գալուն, եթէ իմանաս...

ՖԼ. Երեակայիր,—մի ամբողջ տարի է, որ Վահանը մեղ մօտ չի եկել:

ՍԱԹ. Մի տարուց էլ աւելի:

ՖԼ. Ա՛յս, զրանց անսէրութիւնը մեզ բոլորիս մաշեց: Մեր տան վրայ, կարծես, աշնան մառախուղ է նստած, ճնշնում, ճընշում է: Տեսնես, էլ կը բացուի մեր օրը թէ ոչ:

ՍԱԹ. Այս օրուանից Աստծով կը բացուի... Բայց գիտեսինչ, Ֆլորա: Ես մի բանից եմ վախենում, վայ թէ յանկարծ Միքայէլը վատ արամազրութեան մէջ լինի և այն անգամուայ պէս...

ՖԼ. Ես նրան կը զգուշացնեմ:

ՍԱԹ. Անպատճառ, Ֆլորա: Չը մոռանամ, հա:

(Մտնում է պարոն Ն.-ի գործակատարը:)

ԳՈՐԾ. Կարելի՞ է աեսնել պարոն Թաշճեանին:

ՖԼ. Իսկան: (Ֆլորան եւ Սաթենիկը զնում են: Քիչ յետոյ երեւում է Միքայէլը՝ լրազիր ձեռին: Այցելուին տեսնելուն պէս՝ ընդհատում է լրազիր ընթերցումը: Ոյժմ նրա դէմքը աւելի նիրար է եւ գունատ, աչքերի մէջ յողնութիւն եւ թափիծ:)

### ՏԵՍԻԼ 2.

ՄԻՔԱՅԷԼ, ԳՈՐԾԱԿԱՏԱՐ.

ՄԻՔ. Ա՛, դուք էք:

ԳՈՐԾ. Բարե ձեզ, պարն Թաշճեան:

ՄԻՔ. Բարե, բարե: Ստացաք իմ ուղարկած պատկերը:

ԳՈՐԾ. Այս, դուք բարեհաճել էք ուղարկել իմ պարոնին ձեր. մի պատկերը...

ՄԻՔ. Այս, որ ձեր պարոնը, կամ աւելի ճիշտ, նրա կինը, խիստ հաւանել էին:

ԳՈՐԾ. Իսկապէս հիանալի պատկեր է: Բայց կը ներէք, խնդրեմ, ինձ պատկերեցին վերադարձնել ձեզ...

ՄԻՔ. Վերադարձնել...

ԳՈՐԾ. Այս, հետո բերել եմ: Նախասենեակում յանձնեցի օրիորդին:

ՄԻՔ. Բայց ինչու, ասացէք, խնդրեմ: Հիմա էլ դուր չէ չէ գալիս...

ԳՈՐԾ. Ոչ, ինչպէս կարելի է չը հաւանել մի այնպիսի սքանչելի գործ...

ՄԻՔ. Ուրեմն...

ԳՈՐԾ. Թէն, իս կարծիքով, պատկերը ոչ թէ 300, այլ

հազար բուրփի էլ արժէ, բայց ի՞նչ արած, նրանց հասկացողութեամբ, գինը շատ թանկ է:

Միք. Թանկ: (Դառը ծիծաղ) իրաւունք ունին, իրաւունք ունին...

ԳՈՐԾ. Բայց իմ պարոնը ուրիշ բան է խնդրում ձեզանիք...

Միք. Ասացէք, ասացէք, ես լսում եմ:

ԳՈՐԾ. Նա խնդրում է, որ իր այս լուսանկարը բնական մեծութեամբ նկարեք:

Միք. Ահա, ուրեմն նրան հարկաւոր է գնալ վերձակի մօտ և իր չափը վերցնել:

ԳՈՐԾ. Եւ խնդրում էր նկարել ոչ թէ սի, այլ իւղաներկ գանազան գոյներով:

Միք. Յետոյ:

ԳՈՐԾ. Յետոյ իմ պարոնը շանկանում է իմանալ, թէ արդեօք ինչքան կը վերցնէք այս պատկերի համար:

Միք. (Դառը ծիծաղ. զլուկը թափանարում է) Եթէ ծայրայեղ կարիքը չը ստիպէր, լսում էք, ի՞նչ եմ ասում, ծայրայեղ կարիքը եթէ չը ստիպէր, հաւատացէք իմ ազնիւ խօսքին, ես ոչ մի կերպ չէր ստորացնի ինձ մինչ այն աստիճան, որ ինքս իմ ձեռքով վերցնէի իր լաւագոյն գործերից մէկը և ուղարկէի ձեր պարոնին, խնդրելով իսկական զնից չորս անդամ պահասի... Դրանից աւելի ստորացնել իր վրձինը, ես կարծում եմ, թոյլ չէր տայ և ոչ մի նկարիչ...

ԳՈՐԾ. Այն, իհարկէ... իսկ այս լուսանկարը...

Միք. Իսկ այդ լուսանկարին գալով, խնդրում եմ յայտնէք ձեր պարոնին, որ ես այդ պատէրը չեմ ընդունում: Իսկ եթէ նա այդքան սիրահարուել է իր դէմքի վրայ, նա ունի տանը տրիւմոներ,—ահազին հայելիներ, որոնց մէջ ամեն բռայէ, երբ ինքն իրան կարօտում է, կարող է տեսնել իր կերպարանքը բնական մեծութեամբ և ամենածզրիտ նմանութեամբ:

ԳՈՐԾ. Ես խորհուրդ կը տայի վերցնել, լաւ վարձատրութիւն կը ստանաք:

Միք. Շնորհակալ եմ ձեր խորհրդի համար:

ԳՈՐԾ. Ուրեմն—չէք կամնում ընդունել:

Միք. (Խիստ) Ո՞չ: (Սկսում է կարդալ լրագիրը)

ԳՈՐԾ. Ներողութիւն: (Գնում է:)

Միք. Երթաք բարեւ: (Մտնում է ֆլորան:)

ՏԵՍԻԼ 3.

ՄԻՔԱՅԻԼ, ՖԼՈՐԱ.

Միք. Ես քեզ չեմ ասում, ֆլորա, որ դրանց առաջ չ'արժէ մարգարիտ ձգել, որովհետեւ կոխ կը տան կ'անցնեն, իսկ դու՝ «Ո՛չ, ուղարկիր, ուղարկիր»... Ահա և ուղարկեցի:

Ֆլ. Պատկերը վերադարձել են—շատ հարկաւոր է:

Միք. Բայց չի որ դա մեր վերջին յոյժն էր:

Ֆլ. Ամենեին նչ: Տեսնում ես: (Ցոյց է տախս ականջի օղերը) Սրանք դեռ կան... իսկ եթէ կ'ուզես ուղիղն իմանալ, քո վերջին յոյժը—քո եղբայրն է:

Միք. Ես քեզ չեմ հասկանում: Ի՞նչ ես ուղում ասել:

Ֆլ. (Ուրախ) Ես ուղում եմ ասել, որ վահանը այսօր մեզ մօտ է:

Միք. Վահանը, մեղ մօտ: Դա անկարելի բան է:

Ֆլ. Հաստատ խօսք:

Միք. Ո՞վ ասաց:

Ֆլ. Մայրիկը: Երեկ նրա մօտ է եղել, և նա ասել է, որ վաղը, այսինքն այսօր պիտի գայ մեղ մօտ և քեզ հետ հաշտութեան ձեռք մեկնելու, չը նայած այն ծանր վիրաւորանքին, որ զու նրան հասցրել ես: Այդ հաշտութիւնից է կախուած մեր ընտանիքի երջանկութիւնը... Միքայէլ, չը լինի թէ դու փակիս գուոը մեր բախտաւորութեան առաջ...

Միք. Դու կարծում ես, ինձ համար շատ դուրեկան է մեր, երկու հարազատ եղբայրներիս, խոռվութիւնը և թշնամանքը:

Ֆլ. Միայն խնդրում եմ, Միքայէլ, տես, մի գուցէ դարձեալ այն անզամուայ պէս, բարեկու փոխարէն, երեսդ գարձընես նրանից և քաշուես սենեակդ: Նա գալիս է քեզ հաշտութեան ձեռք մեկնելու, չը նայած այն ծանր վիրաւորանքին, որ զու նրան հասցրել ես: Այդ հաշտութիւնից է կախուած մեր ընտանիքի երջանկութիւնը... Միքայէլ, չը լինի թէ դու փակիս գուոը մեր բախտաւորութեան առաջ...

Միք. Դու կարծում ես, ինձ համար շատ դուրեկան է մեր, երկու հարազատ եղբայրներիս, խոռվութիւնը և թշնամանքը:

Ֆլ. Ուրեմն գու նրան սիրով կ'ընդունես, չի, Միքայէլ:

Միք. (Կարծես, նին վէրը նորոգուեց, կամաց-կամաց յուզուելով) Բայց ի՞նչ անեմ: Միթէ ես մեղաւոր եմ, որ մեր յարաբերութիւններն այսպան փշացան:

ՖԼ. ԵՇ, լաւ, անցածն անցել է։ Զ'արժէ հին դարմանը  
բամուն տալ...

ՄԻՔ. Նա մեզ հետ խիստ տմարդի կերպով վարուեց...  
ՖԼ. Վնաս չ'ունի, գու մեծ եղբայրն ես, ներողամիտ ե-  
զիր։ Նա ջահիլ էր, նա անփոք էր...

ՄԻՔ. (Յուզուած) Մտածիր, թէ նա ինչ կարող էր անել մեղ  
համար—և չ'արաւ։ Ես մի հատիկ եղ էի՝ լծած մի ծանր սայլի։  
Հոգիս դուրս էր գալիս, աչքերս արիւն էր կոխում, անքալով և  
հեալով էի փախում իւրաքանչիւր քայլս,—նա, հարազատ եղ-  
բայրս, տեսաւ—և չը թեթեացրեց իմ լուծը։ (Համարեա լաւագին) Մեր խեղճ ընտանիքը հեծում էր ետին չքաւորութեան մէջ,—  
միակերպ, անգոյն, տիսուր կեանք, ոչ մի միխթարութիւն, մեր-  
կութիւն և սով,—նա այս բոլորը տեսնում էր, և այնուամենայ-  
նիւ ոչ մի սրտացաւութիւն, համակրութեան և ոչ մի ցոյց!..  
Գատառող և թոյլ՝ ևս հանգչում էի մարող ճրադի պէս, և նա  
անուշագրութեան մասնեց ինձ... կարիքը, զրկանքները մեղքո-  
լորիս յուսահատութեան հասցրին,—երբէք նա մօտ չ'եկաւ, նա  
մատ մատի չը խիեց... Նա իր սպանիչ անտարբերութեամբ  
նայում էր, թէ հնչպէս կամաց-կամաց, կեանքի հոգսերի տակ,  
խեղդում, խլանում էր իմ մէջ հոգուս լաւագոյն մասը՝ իմ  
ստեղծագործական աւելնը, երկնային կայծը... Ի՞նչ ծրագիրներ,  
ի՞նչ փայլուն յոյսեր մի քանի տարի առաջ—և ի՞նչ սոսկալի հի-  
ամբափառթիւն՝ այժմ!

ՖԼ. Բայց այնուամենայնիւ, ես կրկնում եմ, գու նրան  
պիտի ներես, պիտի ներես եղբօրդ բոլոր սխաները։ Նա ինքն  
էլ, եթէ կուզես, մեղաւոր չէր այնքան, ինչպէս գու կարծում  
ես։ Նա տեսնում էր, որ ընկեր-բարեկամ, ծանօթ-անձանօթ,  
մեծ ու փոքր, մի խօսքով, բոլորը մի տեսակ տենդային թափով,  
խենթերի նման զլիսապատառ վազում են հարստութեան ետե-  
սից... Հոսանքը զօրեղ էր, յափշտակեց և նրան, ու նա գնաց  
հոսանքի հետ... Բայց ահա նա զգում է, կամենում է փարա-  
տել իր իին մեղքերը—և գալիս է քեզ մօտ հաշտութեան ձեռք  
մեկնելու։ Համար։ Միթէ կրկին երես կը դարձնես նրանից, մի-  
թէ կրկին ետ կը մզկես այն ձեռքը, որը պարզուում է քեզանից  
ներում խնդրելու։ (Վերջին խօսքերի վրայ դուռը բացւում է, եւ երե-  
ւում է նկարիչ Մանասեանը՝ ուրախ, առողջ, ծիծալիոտ դէմքով, ցիլինդրը  
ձեռին։ Նրան տեսնելուն պէս՝ Միքայէլը շտապում է ընդառաջ, Մա-  
նասեանը եւս արագ գալիս է նրան հանդիպելու։ Սիրալիր եւ կարօտագին  
ողջագուրանք։)

ՏԵՍԻԼ. 4.

ՄԻՔԱՅԷԼ, ՖԼՈՐԱ, ՄԱՆՍՍԵԱՆ.

ՄԱՆ. Իմ թանկագին ուսուցչին յարգանքս։ (Տիկնոջ էլ բարե-  
կելուց յետոյ՝ զիմում է Միքայէլին։) Ի՞նչ նիշարել էք։

ՄԻՔ. Բարե, սիրելին։ Ի՞նչպէս էք։

ՄԱՆ. Ի՞նչպէս տեսնում էք—ուրախ և առողջ։

ՄԻՔ. Թոյլ տուէք չնորհաւորել ձեզ ձեր առաջին պատ-  
կերահանդիսի յաջողութեան համար։

ՖԼ. Շնորհաւորում եմ և ես։

ՄԱՆ. Շնորհակալութիւնս։

ՄԻՔ. Քիչ առաջ ես զրա գնահատութիւնն էի կարդում  
լրազրի մէջ։ Ի՞նչ գովեստներ, ի՞նչ սրանչացում... կարդում եմ  
և, ճշմարիտ, հաւատալս չէ գալիս։ Ի՞նչպէս, մտածում էի ինքս  
ինձ, սա այն Մանասեանը չէ, որ ինձ մօտ նկարչութեան դա-  
սեր էր վերցնում, որին սովորցնում էի լոյս և սոսուերի ու հե-  
ռապատկերի կանոնները... Զէ անցել ընդամենը մի տասը տա-  
րի— և որքան մեծ յառաջադիմութիւն, ի՞նչպէսի հսկայական  
թուիչք...

ՄԱՆ. Գիտէք, պարոն Միքայէլ, իմ քննադատը, կարծեմ,  
մի քիչ հրապուրուել է և ասել աւելի, քան հարկաւոր էր. այն-  
պիսի բառեր է շոայլել, որոնց արժանացնում են միայն երկելի  
վարպետներին։

ՄԻՔ. Այդ խօսքերը պատիւ են բերում ձեր համեստու-  
թեանը; Եթէ իմանաք, ևս այժմ ի՞նչպէս եմ հետաքրքրուած  
ձեղանով, ի՞նչպէս կուղէի տեսնել ձեր վրձինի արտադրութիւն-  
ները։

ՄԱՆ. Ինձ էլ սաստիկ հետաքրքրում է ձեր կարծիքը,  
իբրև մի հմուտ գեղարուեստագէտի կարծիք։

ՖԼ. Դուք այստեղ չը պիտի բանափ ձեր ցուցահանդէսը։

ՄԱՆ. Ի՞նչպէս չէ, տիկին։ Վազն և եթ։ Ես եկել եմ այս  
բաղաբը յատկապէս այդ նպատակով։

ՄԻՔ. Ուրախալի է այդ լսել։

ՄԱՆ. Անհեակը արդէն վարձուած է։

ՄԻՔ. Հիանալի։

ՄԱՆ. Ահաւասիկ ես բերել եմ ձեզ համար պատւաւոր  
տոմսակներ։ (Ցանձնում է տոմսակները։)

ՄԻՔ. Շնորհակալ եմ։ Կը դանք իհարէ։

ՄԱՆ. Նոյնպէս և ձեզ, տիկին, կը խնդրէի չնորհ բերել  
իմ պատկերահանդէսը:

ՖԼ. Ուրախութեամբ:

ՄԻՔ. Ուրեմն վաղը կը բացուի:

ՄԱՆ. Այս Այսօր կը վերջացնեմ պատկերների դաստիու-  
րութիւնը, և վաղը ժամը 10-ից արդէն բաց է մինչև երեկո-  
յեան իննը, և այսպէս մի ամբողջ ամիս:

ՄԻՔ. Քանի հատ է:

ՄԱՆ. Ընդամենը երեսուն:

ՄԻՔ. Բայց լրագրի մէջ ասուած է, կարծեմ, երեսուն ե-  
րեք:

ՄԱՆ. Այդքան էր: Բայց երեքն արդէն վաճառուած է,  
ՖԼ. Երեքը վաճառուած:

ՄԱՆ. Այն, և բաւական թանկագին պատկերներ:

ՄԻՔ. Քանիսո՞վ:

ՄԱՆ. Այդ երեք կտոր պատկերների համար ես ստացել  
եմ ընդամենը 1500 բուրլի:

ՖԼ. Լսում ես, Միքայէլ, 1500 բուրլի...

ՄԻՔ. Կեցցէք, կեցցէք: Շատ ուրախ եմ: Դա մեծ յաջո-  
ղութիւն է: Բոլորն էլ, իհարկէ, ժանր, այս:

ՄԱՆ. Դիմանկար և ժամր: Ես սիրում եմ նկարչութեան  
այն ճիւղը, որտեղ կարելի է խօսել մարդու հոգուց:—Ահա և  
պատկերահանդիսի ցուցակը: (Տալիս է մի թերթիկ:)

ՄԻՔ. (Աջի անցկացնելով ցուցակը) Ձեր ցուցահանդէսը  
խոստանում է վերին աստիճան հետաքրքրական լինել:

ՖԼ. Տնուր ինձ նայեմ, Միքայէլ: (Նայում է:)

ՄԻՔ. Ո՞րքան ժամանակում էք նկարել այս ամենը:

ՄԱՆ. Վերջին երկու-երեք տարուալ ընթացքում:

ՄԻՔ. Ռեղմանաւոր վրձին է:

ՄԱՆ. Ես արագ նկարող եմ:

ՄԻՔ. Բոլորն էլ նկարել էք արտասահմանում:

ՄԱՆ. Մի մասը Փարիզ, մի քանիսը՝ Միւնիսը:

ՄԻՔ. Յետոյ, մասնակցում էիք, իհարկէ, այնազի սալոն-  
ներում:

ՄԱՆ. Այն, մի քանի անգամ մասնակցել եմ և, պէտք է  
ասած, միշտ սիրալիք ընդունելութիւն էի զանում: Լրագիրներն  
էլ երեմն գովասանքներ զրում էին իմ մասին: Այդ կողմից ես  
շատ գոն եմ: Մի պատկերս, օրինակ, զնուած է և այժմ դանւում  
է մի թանգարանում, երկուսն էլ ուղարկուած են գաւառա-  
կան միւզէոնները:

ՄԻՔ. Հազար երանի ձեզ: Եւրոպայի գեղարուեստական

կենտրոնները սափ տակ տուած և ինչ սքանչելի գլուխ-գործոց-  
ներ տեսած կը լինիք...

ՄԱՆ. Այն, իհարկէ: Բայց ոչ բոլորը: Բոլորն ի մօտով ձա-  
նաշելու համար՝ հարկաւոր են երկար տարիներ և նամանաւանդ  
միջոցներ... ձիշտ է, ինձ լաւ ծանօթ են այժմ կուվրը, բերլինի  
աղջային միւզէոնը, Դրեզդենի և Միւնիսընի հոչակաւոր պատ-  
կերասրահները, Պետերբուրգի էրմիտաժը... բայց այս գեռ  
բոլորը չեն: Դեռ մնում են Հոլլանդիան, Խոպանիան, Իտալիայի  
մեծ մասը... Մի խօսքով, դեռ շատ բան կայ տեսնելու: Այդ էլ  
ապագայում:

ՄԻՔ. Տայ Աստուած, որ դրանց տեսութեանն էլ արժա-  
նանաք: Բայց այդքանն էլ կարծեմ բաւական է, որ ձեր գե-  
ղագիտական հասկացողութիւնների մէջ մեծ յեղացջում կա-  
տարուէք:

ՄԱՆ. Եւ կատարուեց: Հին և նոր ժամանակների հանձա-  
րեղ վարպետների գործերը ինձ շատ և շատ բան սովորեցրին:

ՄԻՔ. Գեղարուեստին ծառայողը ահա այսպէս պէտք է  
լինի, ֆլորա,—անտառային թռչուն, իթէ այդ քեզ համելի է:

ՖԼ. (Կիսակատակ) Քեզ չենք խանգարում: Կարող ես դառ-  
նալ անտառային թռչուն, իթէ այդ քեզ համելի է:

ՄԱՆ. (Նոյնպէս կատակով) Մի պայմանով, տիկին, որ դուք էլ  
դառնաք անտառային թռչուն, և հետեւք ձեր ամուսնուն, ապա  
թէ ոչ, գուք կը մնաք մենակ և կարօտը կը քաշէք: (Ծիծաղում  
են:) Համ, իդէպ, ասացէք, ինդրեմ, պարսն Միքայէլ, դուք ինչ  
էլք անում այս վերջին տարին:

ՄԻՔ. Ես—թմրում էի և ուրիշ ոչինչ:

ՄԱՆ. Ի՞նչ էք ասում:

ՄԻՔ. Այն, հաւատացէք ինձ:

ՄԱՆ. Ոչինչ չէք նկարել:

ՄԻՔ. Ոչինչ:

ՄԱՆ. Այդ շատ ցաւալի է:

ՄԻՔ. Այն, թանկագին բարեկամո, գլուխում էի գէպի ցած,  
և կրքան գուք աւելի և աւելի վեր էք բարձրանում կատարե-  
լութեան աստիճաններով, այնքան էլ ես աւելի և աւելի ցած  
էի գլուխում անկման ձանապահով:

ՄԱՆ. Պարսն Միքայէլ...

ՄԻՔ. Չ'արձէ մինչև անդամ խօսել իմ մասին:

ՄԱՆ. Ինչու ձեզ այդպէս դատավետում էք:

ՄԻՔ. Որովհետեւ ես մէկն եմ այն վատ արարածներց, ո-  
րոնք գաւառանում են իրենց կոչմանը և իրենց քանքարը, այդ  
գեղեցիկ երկնային պարգիք, հողի տակը թաղում... Ոչ, իմ մա-

սին չը խօսենք: Դուք, դուք պատմեցէք ձեր տպաւորութիւններից, ձեր ճամբորդութիւններից... Ես բոլոր ուշադրութիւնն լարած՝ կը լսեմ: Խօսեցէք: Ի՞նչ նոր հովեր, ի՞նչ նոր հոսանքներ կան այնտեղ, գեղարուեստի այն օրհնեալ աշխարհում: (Ընդմիջում:)

**ՄԱՆ.** (Նայելով ժամացոյցին) Ա՛, արդէն ուշ է: Ինձ սպասում են: Ներեցէք, խնդրեմ: Մի ուրիշ անգամ ես կը գամ ձեզ մօտ և երկար-երկար զրոյց կ'անենք միասին այդ նոր հովերից: (Կամնում էր հրաժեշտ տալ, յանկարծ մի բան է լրջում:) Ա՛խ, իրաւ, քիչ էք մեացել մոռանայի: Զէ որ ես յիշատակի նուէք եմ բերել ձեզ համար իմ նկարչական գործերից: (Դրան մօտ աթոռի վրայ դրուած է պատկերը՝ շրջանակով եւ փաթաթուած: Մանասնը վերցնում է պատկերը եւ մատուցնում Միքայէլին: ) Իմ առաջին զեկավարին ամենախորին յարգանօք:

**ՄԻՔ.** Ծնորհակալ եմ: Ես խիստ զգացուած եմ ձեր երախտագէտ սրաի այսպիսի ջերմ արտայալութեամբ:

**ՄԱՆ.** Չ'արժէ, չ'արժէ:—Պատիւ ունիմ, տիկին:

**ՖԼ.** Ցը տեսութիւն:

**ՄԻՔ.** Միթէ չէիք կարող փոքր ինչ ուշանալ: Միասին կը նայենք այս պատկերը և յետոյ...

**ՄԱՆ.** Խնդրում եմ, ներէք: Չեմ կարող: Ժամադիր եղած եմ: Սիրում եմ ճշտապահ լինել: Ցը տեսութիւն: (Գնում է: Միքայէլը բաց է անում պատկերը, եւ Ֆլորայի հետ ուշխուզով դիտում են: Ֆլորայի գէմքի վրայ նկատելի է հիացում: իսկ Միքայէլի երեսը արտայայտում է միաժամանակ թէ գորութիւն եւ թէ թախիծ:)

## ՏԵՍԻԼ 5.

**ՄԻՔԱՅԷԼ, ՑԱՐԱՐԱ.**

**ՖԼ.** Աքանչելի պատկեր է: Զէ, Միքայէլ: «Հայ գեղջկուհին աղքիւրի մօտ:» Շատ գեղեցիկ է: Եւ ի՞նչ զարմանալի նրբութիւն կայ այստեղ...

**ՄԻՔ.** (Հոգոց) Այն, շատ յաջող է: Կենդանի կանգնած է աչքի առաջ իսկական հայուհին իր բնորոշ դիմադներով, իր ինքնատիպ արտայայտութեամբ:

**ՖԼ.** Ի՞նչ հարուստ գոյներ և ի՞նչ ներդաշնակութիւն:

**ՄԻՔ.** Ճիշտ է, ճիշտ է:

**ՖԼ.** Ծով-ծով աչքերին նայիր, Միքայէլ: Կարծես սրանց մէջ կրակ է վառւում:

**ՄԻՔ.** Ուղիղ է: Աչքերը արտայայտիչ են:

**ՖԼ.** Բայց ափսնս, որ պատկերի դիրքը շատ փոքր է: Իսկ կարծիքով, այս է սրա միակ պակասութիւնը:

**ՄԻՔ.** Միակ պակասութիւնը... Իսկ ֆոնը: Զես նկատում, թէ ի՞նչ անբնական գոյնով է շաղախուած: Բոլորը—մանիշակագոյն:

**ՖԼ.** Բայց, չը նայած դրան, սա մի իսկական վարպետնկարչի գործ է:

**ՄԻՔ.** Ես չեմ ուրանում, որ տաղանդի գրոշմբ ակնյայտնի երեսում է պատկերի վրայ, բայց...

**ՖԼ.** (Յափշտակուած) Հիմա կարելի է ասել, որ մեր գեղարուեստի հորիզոնում մի պայծառ ասող է ծագում:

**ՄԻՔ.** (Կծու ծիծաղով) Ես քեզ խորհուրդ կը տամ մի քիչ չափաւորես քո յափշտակութիւնը:

**ՖԼ.** Ի՞նչո՞ւ, ես ուզի՞ղ չեմ ասում:

**ՄԻՔ.** Զուա ճշմարտութիւն է քո ասածը:

**ՖԼ.** Հեգնութիւնը թնդ ե, եթէ քաջութիւն ունիս, խոսապահութիր. միթէ սրա նկարողը՝ Մանասեանը բարձր չը մեր բոլոր նկարիչներից:

**ՄԻՔ.** Իբրև զիմանկարիչ, այն, գուցէ ե...

**ՖԼ.** Ի՞նչ անուն կ'ուղես, տներ, բայց ես հաստատ խօսք եմ ասում, մինչև օրս ոչ մի պատկեր ի՞նձ վրայ այնքան խորը տպաւորութիւն չէ գործել, ի՞նչպէս սա:

**ՄԻՔ.** (Զափուած բարկութեամբ) Ի՞նչպէս կարող ես դու այդ ասել, Ֆլորա: Ի՞նչպէս կարելի է զրան համեմատել միւսների հետ, որոնք պասը, տասնեհինգ, քսան տարի է աքնում, աշխատում են գեղարուեստի ասպարիզում, որոնք իրենց տաղանդը վազուց է ապացուցել են և իրենց ճիւղերի մէջ նմանը չ'ունին... Մանասեանը, այն, մի չնորհալի նկարիչ է, գուցէ և փայլուն ապագայ է խոստանում, բայց նա այսօր զես ևս մի սկըսնակ է! Իսկ զու նրան արդէն երկինք ես բարձրացնում! (Անց ու դարձ է անում անհանդիս եւ յուզուած:)

**ՖԼ.** Օհօ, ես տեսնում եմ, որ զու կամաց-կամաց սկսում ես տաքանալ, բորբոքուել... Ասա, խնդրեմ, ի՞նչո՞ւ ես բարկանում:

**ՄԻՔ.** Ես չեմ բարկանում: (Նստում է) Ես միայն զարմանում եմ, որ դու ասած խօսքերդ լաւ չես կըսադատում:

**ՖԼ.** Կարծում ես, ես չեմ հասկանում, թէ ի՞նչ է կատարուում ներսդ:

**ՄԻՔ.** (Վեր կենալով) Ի՞նչ է կատարուում:

**ՖԼ.** Շատ պարզ է, Դու... Մանասեանին...

**ՄԻՔ.** Մանասեանին—ի՞նչ:

**ՖԼ.** Նախանձում ես:

**ՄԻՔ.** Նախանձում... Այն, դու գուշակեցիր: Ես նրան նա-

խանձում եմ: Առաջին անգամ կեանքում ես զգացի նախանձ դէպի իմ արուեստակիցը... Բայց այն, ինչ որ կրում եմ այժմ, այն չար նախանձը չէ, որ ձգտում է ոչչացնել ախոյնանին, այլ այն բարի և կարող նախանձը, որ կրակ է վառում մեր ներսը, փոթորկում է մեր հոգին և, ինչպէս մի խթան, մղում է դէպի առաջ, դէպի վեր, դէպի կատարելութիւն...

Ֆլ. Արծէ միթէ այդքան յուզուել զրա համար:

Միթ. Մինչդեռ նա, հոգով սրատվ իր սուրբ կոչման նուիրուած, ձգտում էր միշտ դէպի վեր, դէպի գեղարուեստի բարձր սահմանները, սաեղծագործութեան գագաթնակէտը, և նոյն այդ ժամանակ փառում, բորբոսնում էի իմ շրջապատի ճահճի մէջ!...

Ֆլ. Է՛հ, ով է մեղաւոր. ոչ դու, ոչ մենք: Զախորդ հանգամանքներ, ձեռք ու ստու կապուած...

Միթ. Անմեղ հրեշտակներ... Ի՞նչ էր ձեր մշտական ձիգն ու ջանքը, եթէ ոչ սառը ջուր ածել սղեսութեանս վրայ, անշտաել ինձ իմ արուեստից, թոփներս կապկապել...

Ֆլ. Հիմա էլ մենք մեղաւոր դուրս եկանք:

Միթ. Այն, դուք, դուք... Դուք իմ ստեղծագործութեան վրայ նայում էիք, իբրև մի կթան կովի վրայ: Երբ տեսաք, որ իմ վրձինը չէ տալիս ձեզ վայելուչ ապրուստ և ապահովութիւն, դուք բոլորդ զինուեցիք իմ դէմ, ակսեցիք ծաղրել, արհամարհել իմ պարապմունքը: Այն բոպէններին, երբ ես յափշտակուած իմ վրձինով՝ կեանք և բնութիւն էի ներշնչում կտաւին, ականջիս տակ անդադար ձեր ձայնն էր հնչում. «Միքայէլ, ձգիր վրձինդ, զա մեզ հաց չէ տալիս, Միքայէլ, մաիր ծառայութեան. մեզ հաց, հաց է հարկաւոր!...» Օ՛հ, այդ ձայնը ես չեմ մոռանալ, մինչե հիմա էլ կարծես ականջում է... Նա մարդկային ձայն չէր, այլ իմ թաղման, իմ յուղարկաւորութեան գանգակն էր այն!... (Չեռք կրծքի վրայ:)

Ֆլ. Մի յուզուիք, Միքայէլ: Զէ որ բժիշկը արգելել է:

Միթ. Օ՛, անիծեամ, անիծեամ...

Ֆլ. Տեսնում ես, ես որ ասում եմ: Միքատ է, հա:

Միթ. Կեանքս, կեանքս է թրարտում այստեղ, պատուել է ուզում իր պատեանը... Սպասիր, սպասիր, անիբաւ, զեռ ժամանակը չէ: Դեռ ամեն բան կորած չէ ինձ համար: Ո՛չ, ես չեմ կամենում հաւատալ, որ ամեն ինչ կորած է: Ես զեռ ընդունակ եմ աշխատելու, և կը սկսեմ մի նոր, փառաւոր աշխատանք: Հարկաւոր է միայն, որ ես կեանքիս ձեզ փոխեմ, կեանքիս ճանապարհը փոխեմ... Ինձ կազդարուել է պէտք, թարմանալ... Իմ գլուխ-գործոցները զեռ ինձ սպասում են, զեռ առա-

ջըս են... (Մտածում է) Ահա—հէնց այս բոպէիս մի հոյակապ սիւժեա լուսաւորեց իմ միաքը... զաղափարը զեռ ես աղօտ, զեռ սակաւ անորոշ, բայց, ըստ ամենայնի, մի հանձարեղ դործ պիտի լինի դա, արժանի նոյնիսկ Բէնկինի վրձինին... Միայն հարկաւոր է մտածել, լաւ մտածել, և այն—միայնակութեան մէջ, այն, անպայման միայնակութեան մէջ! (Մտախոն հեռանում է մրւս սենեակը, զուոք ետեւիցը վրայ բերում եւ սկսում այստեղ անց ու դարձ անել:)

### ՏԵՍԻԼ 6.

ՅԼՈՐԱ. (մենակ).

Տէր Ստաուած, ինչպիսի նախանձ է վառուելնրա մէջ և ուտում է ներսը... Նա կարող է մինչե անզամ խելագարուել, (Մտնում է զորիսիմէն՝ ուրախ եւ զրկարաց: Փաթաթւում են:)

### ՏԵՍԻԼ 7.

ՅԼՈՐԱ, ՀՌԻՓՍԻՄԵԼ.

ՀՌ. Ֆլորա:

Ֆլ. Հոբիսօ ջան:

ՀՌ. Ի՞նչպէս ես, հոգիս: Լաւ չես երեսում: Սպա մի նայեմ աչքերիդ: Օ՛, մի ինչ-որ թափիծ է նստած աչքերիդ մէջ...

Ֆլ. (Հոգուց) Կեանքը գիտէ, սիրելիս:—Իսկ դու ինչպէս ես

ՀՌ. Ինչպէս տեսնում ես:

Ֆլ. Լաւ ես, լաւ ես, հոգիս: Լցուել, սիրունացել ես:

Հանուիք, ինչպէս:

ՀՌ. Իսկայն: Ես այսօր ամբողջ օրը ձեզ մօտ եմ: (Հանում է վերնազգեստը եւ զիսարիկը: Ֆլորան նրան օգնում է: ) Ա՛յնքան խօսաեմ, որ գլուխներդ տանեմ: Զեզ բոլորիդ այնպէս կարօտել եմ, մանաւանդ Հրանտին... Ա՛յս, Հրանտիկ, Հրանտիկ, հրեշտակ է, հրեշտակ... Ո՞ւր է նա, հա, տանը չէ:

Ֆլ. Մանկական պարտէզ է գնացել, շուտով կը գայ:

ՀՌ. Է՛հ, յեսոյ: Ասա ահանեմ է, ինչ էք անում, ինչպէս էք անց կացնում ձեր ժամանակը—արգեօք ուրախ, ախուր...

Ֆլ. Շատ տիսոր, Հոբիսօ. միատեսակ, ձանձրալի...

ՀՌ. Միքայէլը ինչպէս է:

ՖԼ. Դժգոհ է իր վիճակից. ինքն էլ միշտ հիւանդ:

ՀՌ. Ոչինչ, բժիշկը այստեղ է...

ՖԼ. Ա՛խ, իրաւ, գու արդէն աւարտել ես, բժիշկ հա:  
Շնորհաւորում եմ:

ՀՌ. Շատ շնորհակալ եմ: Իսկ միւսները ինչպէս են՝ մայ-  
րիկը, աղջկերքը:

ՖԼ. Մայրիկը՝ խեղճը բոլորովին հալից ընկել է, աղջը-  
կերքն էլ իմ օրում:

ՀՌ. Այսինքն պարապ-սարապ ման էք դալիս և սպանում  
ժամանակը:

ՖԼ. Հապա ինչ:

ՀՌ. Այդ լաւ չէք անում, Ֆլորա, թնջլ տուր ինձ նկատել:  
Ինչո՞ւ դուք էլ չէք ախտառում: Միթէ չէք կարող, օրինակ,  
զբաղուել գասերով, կարուծե անել, կամ մի ուրիշ բան: Հա-  
պա մեղք չէ Միքայէլը: Հոգսերի բոլոր ծանրութիւնը զցել էք  
նրա վրայ, իսկ դուք քաշուել մի կողմէ: Վերջապէս ես չեմ հաս-  
կանում, թէ ինչպէս կարելի է մնալ շարունակ անդորձ, անդորձ,  
անդորձ: Աստուած վկայ, ես կը մեռնէի ձանձրոյթից, եթէ...

ՖԼ. Դու որ կաս, մի տղամարդ ես:

ՀՌ. Այդ միւնոյն է, բոլորը պէտք է աշխատեն՝ թէ իին  
թէ տղամարդ... (Ընդմիջում:) Ֆլորա, ինչ ծանր է այստեղ օղը:

ՖԼ. Մենք սովորել ենք:

ՀՌ. Ի՞նչ անտանելի բնակարան է: Աւելի լաւը չը դամք:

ՖԼ. Ինչո՞ւ չէ: Գտնել կարելի է, բայց գները անմատչելի  
են, թանկ ու կրակի:

ՀՌ. Բայց այստեղ ապրել չի լինիր: Բակը կեղտոտ, ան-  
կարգ, իսկ ներսը... Բոլոր սենեակներն էլ այսպէս են:

ՖԼ. Համարեա բոլորը:

ՀՌ. Այսպէս ցած, մութ, խեղզուկ:

ՖԼ. Սա դեռ ամենից լաւն է:

ՀՌ. Խոնաւութիւն էլ կայ, ինչպէս երեւում է:

ՖԼ. Այն անկիւնը չես տեսնում:

ՀՌ. (Մօտենալով դիտում է) Ա՛յ, այ, այ—մինչե անդամպաս-  
տառը բորբոսնել, փոել է... Ուհ, գոնէ պատուհաններն էլ է  
բաց պահեցէք, օդ խաղայ... (Ինքը բաց է անում պատուհանը:) Ա՛յ  
այսպէս: Օհ, հազիւ մի քիչ մաքուր օդի հոսանք մտաւ այս-  
տեղ: (Նայում է պատուհանից:) Իսկ այս ինչ պատ է, և ինչքան  
էլ բարձր, կարծես թաքելոնի աշտարակը լինի: Ուրեմն ձեր բը-  
նակարանի մէջ արև չէ թափացնում:

ՖԼ. Եւ ոչ մի ճառապայթ:

ՀՌ. Ա՛, ուրեմն փառք տուիք Աստծուն, որ դուք կարո-

զացել էք դեռ կենդանի մնալ և չէք բորբոսնել այն պատի նը-  
ման... ի՞նչպէս կարելի է, ասա խնդրեմ, այդքան անփոյթ լի-  
նել գէպի առողջապահական պայմանները... Միթէ Հրանտիկն  
էլ այս նեխուած միջնորդարի մէջ է խաղում, վազգում, բնում...  
եւզն երեխայ, ինչպէս խղճում եմ նրան:

ՖԼ. Սիրելիս, ով չի ուզենայ լաւ՝ բնակարանում ապրել,  
լաւ անունդ ունենալ, լաւ հագնուել... Բայց—միթէ դու չե-  
տես մեր գրութիւնը:

ՀՌ. Ձեր գրութիւնը... Ես չը զիտեմ... վատ է:

ՖԼ. Անասնելի է: Միքայէլը՝ խեղճը մենակ, մի աշխատա-  
ւոր, իսկ ընտանիքը ահազին: Երեխ, քեզ գեռ յայտնի չէ, որ նրա  
հանդուցեալ քրոջ որբերն էլ աւելացան մեր տանը, Միքայէլի  
վզին մնացին, և ահա մի տարի է, որ մեզ մօտ են: Ի՞նչպէս  
հասցնի խեղճ Միքայէլը, քանի կտոր լինի նա: Պարագերն էլ  
մի կողմից են խեղջում...

ՀՌ. Միթէ ձեր գրութիւնը այդ աստիճան անսախանձելի  
է, հոգիս:

ՖԼ. Ա՛խ, Հոփիսօ, եթէ իմանաս, թէ ինչեր է կատարուել  
մեր տանը վերջին տարիները...

ՀՌ. Միքայէլը տանն է:

ՖԼ. Այս բոպէխս կը կանչեմ: (Մօտենում է դրան, որ բաց ա-  
նի, բայց դուռը փակ է: Չայն է տալիս) Միքայէլ: (Դրան ետեւից լը-  
տում է Միքայէլի ծայնը. «Ինձ մի խանգարից»:)

ՀՌ. Ի՞նչ ասաց:

ՖԼ. Ասում է, «Մի խանգարիբ»: Բայց նա չը զիտէ, որ  
դու այստեղ ես, թէ ոչ խկոյն կը զայ: (Բաղիսում է դուռը:) Մի-  
քայէլ, բաց դուռը, Հոփիսօն եկել է մեզ մօտ: Այն, Հոփիսօն,  
Հոփիսօն: (Միքայէլը դուռը բաց է անում եւ երեւում է շեմքի վրայ զար-  
մացած եւ ուրախ):

## ՏԵՍԻԼ 8.

Միքայէլ, Ֆլորա, ՀոփիսօՄիւլէ.

Միքայէլ, օրիորդ Հոփիսօմէ: Բարի:

ՀՌ. Զէլիք սպասում:

Միքայէլ, Ամենելին:

ՖԼ. Ես էլ չէի սպասում բոլորովին:

Միքայէլ, ի՞նչպէս էք:

ՀՌ. Շնորհակալ եմ: Լաւ:—Իսկ դուք, պարան Միքայէլ,  
կարծես ծերացել էք:

Միք. (Յոյց տալով մաղերը) Նայեցէք, արդէն սպիտակ թեւ-  
լեր են երևում...

Հիմ. Այդ ոչինչ: Բանն այն է, որ հոգով չը ծերանաք:

Միք. Այն, հոգու ծերութիւնը սարսափելի է:

Հիմ. Բայց ձեր դէմքի վրայ ես յովնութիւն եմ նկատում, մի տեսակ մելամաղձու ժպիտ, որ խօսքով դժուար է նկարա-  
գրել, միայն կարելի է զգալ:

Միք. Այն, ինչ որ դուք նկատում եք իմ դէմքի վրայ, իմ  
անցեալ, չարքաշ կեանքի դրոշմն է, օրիորդ... Այն, մենք ծերա-  
ցանք, մենք հաշւից դուրս եկանք: Հիմա ասպարէզը մնում է  
ձեզ, երիասարդ ոյժերից:

Ֆե. Հոփիսօն արդէն աւարտել է, գիտես, Միքայէլ:

Միք. Այն:

Հիմ. Այն, արդէն:

Միք. Շնորհաւորում եմ: (Կատակով) Ինձ կը բժշկէք:

Հիմ. (Կիսակատակ) Ռւրախութեամբ, միայն մի պայմանով,  
որ դուք առանց այլիսայլութեան և անյապաղ դուրս գաք այս  
բնակարանից, որովհետեւ սա հիւանդութիւնների բուն է:

Միք. Շատ ճշմարիտ է, և մենք այստեղ երկար մնալու  
չենք:

Ֆե. Իհարկէ, ոչ:

Հիմ. Եւ վերջապէս միթէ սա նկարչի բնակարան է: Նոյն  
իսկ մի փոքրիկ հորիզոն, երկնքի մի կտոր էլ չը կայ, որ նայի  
մարդ, և միրտը բացուի: Միթէ այս տունը ձեզ տրամադրում  
է նկարելու:

Միք. Ամենեին:

Հիմ. Հապա ինչպէս եք կարողանում նկարել:

Միք. Ես էլ չեմ նկարում. թողել եմ ամեն ինչ և ծառա-  
յում եմ:

Հիմ. Հաւատամ արդեօք:

Միք. Թնդ վկայի Ֆլորան:

Ֆե. Ուղիղ է ասում, Հոփիսօն, թողել է:

Հիմ. Ականջովս լսածին դժուարանում եմ հաւատալ:

Միք. Այդ ինձ էլ երազ է թուում:

Հիմ. Տէր Աստուած, նկարիչ թաշճեանը, գեղարուեստի  
երկրպագուն, նա, որ մի ժամանակ վրձինը չէր թողնում ձեռ-  
քից, որի սանզդագործութեան մէջ էր ամիսովուած իր ամբողջ  
աշխարհը, ձգել է իր վրձինը... Եւ դու, Ֆլորա, կարողացել ես  
անտարբեր աչքով նայել մի փայլուն տաղանդի կործանման...

Ֆե. Ախ, դու չը զիտես մեր հանգամանքները և...

Միք. (Լուրջ) Դու լսիր նրան, լաւ լսիր:

Հիմ. Ոչ մի հանգամանք ես չեմ կամենում իմանալ: Ինչ որ  
էլ ասես, հոգիս, ես քեզ դատապարտում եմ: Պարոն Միքայէլը  
կարող էր հարկադրուած զգալ իրեն այդ քայլն անելու. բայց  
դու չը պիտի թոյլ տայիր: Դու պէտք է փաթաթուէիր, կախ  
ընկնէիր նրա վզովը, արտասուըն աչքերիդ աղաչէիր, որ նա  
այդ քայլը չ'անէր:

Ֆե. Հոփիսօն, սիրելիս, հասկացիր վերջապէս, որ գեղա-  
րուեստը, մանաւանդ նկարչութիւնը մեզ մօտ ապրուստ չէ  
տալիս:

Հիմ. Պարոն Միքայէլ, միթէ, ճշմարիտ, դուք ընդմիշտ  
թողել էք ձեր վրձինը:

Միք. Ոչ, ես լուրջ մտածում եմ, թէ ինչպէս կարող եմ  
նորից վերածնուել:

Հիմ. Ո՛չ, այդ անհրաժեշտ է... Այն, ձեզ վերածնուել է  
պէտք: Ես կարծում եմ, իւրաքանչիւր անհատ, որ ի ընէ օժ-  
տուած է ձիբքերով, պատկանում է ոչ միայն իր մերձաւորնե-  
րին և իրեն, այլ առաւել ես իր միջավայրին, և դուք, որ ու-  
նիք տաղանդ, պիտի տաք մեզ այն, ինչ որ ձեզանից սպասում  
ենք—գեղարուեստական գլուխ-գործոցներ: Հակառակ դէպում  
դուք պարտական էք մնում ամենըի առաջ!

Միք. (Ոգեւորուած) Լսո՞ւմ ես, Ֆլորա...

Հիմ. Այն, ուշիքի եկէք, սթափուեցիք, քանի գեռ ուշ չէ...

Միք. Այս ձայնը ինձ կոչում է զէպի նոր կեանք...

Ֆե. Կուշար քաղցածին... Զօ զիտես այս առածը: Հոփի-  
սօն շատ բան չը գիտէ:

Միք. Ես հօ զիտեմ, և այսուամենայնիւ կ'ասեմ. կեցցէ  
Հոփիսիմէն:—Վաղուց է, շատ վաղուց, որ ես կարօտ էի այս-  
պիսի ջերմ քաջալերութեան: Շնորհակալ եմ, օրինրդ, շատ շը-  
նորհակալ եմ: (Սեղում է նրա ձեռքը): Ֆլորա, ահա մի կին-  
մարդ, նոյնպիսի քնքոյշ արարած, ինչպէս և դու, բայց և նոյն  
ժամանակ որքան առնական և բարձր թոհէք երկրի այս կարծը  
դանդուածից զէպի վեր... Ա՛յս, ինձ երջանիկ կը լինէի ես, եթէ  
դու և քոյքես, փոխանակ ինձ ես մասնակից անելու ձեր մա-  
նըր կոփւներին ու խոռվութեանց, ահա այսպէս, օրիորդ Հոփի-  
սիմէի նման, իմ կոչումն յիշեցնէիք ինձ, կշտամբէիք ինձ թըմ-  
րութեանս համար և նոր կեանքի, վերածնութեան յորդոր կար-  
գայիք ինձ... Այն ժամանակ ես թերես չէի համնի այս խղճալի  
դրութեան, որ մի խայտառակ անկում է ինձ նման մի զազրի-  
ւի, փուճ կենդանու համար...

Հիմ. (Ֆլորային) Ի՞նչպէս յուզուած է:

Ֆե. Միքայէլ, ինչպայիր քեզ...

Միթ. Օ՛չ, անիծեալ, անիծեալ թմրութիւն... Ես այս բնչ արի... Սարսափելի է... Ես սպանեցի իմ հոգու մաքուր, ազնիւ այն մասը, որ իմ անունը պիտ անմահացնէր... Աստուած ինձ պարգևել էր մի չնորհ, և ես այն կենդանի թաղեցի: Ես իմ պիդ չնչովս հանգըրի և այն սուրբ կայծը, որ ի բնէ միշտ վառ էր այստեղ... Եւ այս բոլորը—մի կտոր հացի համար!.. Օ՛, չարագործ, խելագար, անձունի սարուկ!..

Յի. Միքայէլ, սիրելիս, բաւական է, որքան քեզ դատավետեցիր: Դու մեղաւոր չես: Յանցաւորը մենք ենք քո առաջ, մենք և ուրիշ ոչ ոք!.. Ներիր մեզ, ներիր, աղաչում եմ...

Միթ. Ոչ ոք մեղաւոր չէ, ես քեզ ասում եմ, ոչ ոք, բայց ինձանից. ոչ ընտանիք և ոչ միջավայր, այլ ես և միմիայն ես! Փոխանակ կուրծքս ժայռի պէս դէմ տալու բախտի հարուածներին, ես թուլացայ և ընկճուեցի, ինչպէս չորացած եղեգն!

Հի. Ինչպէս երեւում է, մեծ վիշտ էր կրել այս վերջին տարիները...

Միթ. Մի ամրող դրամա: Դուք չը պիտէք, օրինրդ, թէ ինչպէս է լցուել սիրա, որքան գառնութիւն է հաւաքուել այստեղ: Շնորհակալ եմ ձեղանից: Դուք եկաք օգնութեան ուղիղ այն ժամին, երբ ես որոնում էի իմ փրկութեան ճանապարհը և նոյնիսկ գտել էլ այն, բայց գեռ վարանում էի, գնալ այն ճանապարհով թէ ոչ: Բայց ձեր անակնկալ երեալը, ձեր կշտամբանքը, ձեր մաքի ազնիւ թափը, խարազանի հարուածի պէս, դիպաւ ինձ, սթափեցրեց ինձ, վանեց թմրութիւնս, և ահա—վճռուած է այն հարցը, որ քանի տարի է առնջում էր ինձ, ինչպէս կոշմար:

Հի. Այսինքն:

Միթ. Թողնել ծառայութիւն, կեանքի հոգսերը, մասմունքը և բոլոր էութեամբ նուիրուել կրկին պաշտելի ստեղծագործութեան:

Հի. Ի՞նչ լաւ բան կ'անէք:

Յի. Միքայէլ, դու ուզում ես պաշտօնդ թողնել:

Միթ. Այն, անպատճառ: Ես կամենում եմ գանել իմ կատարելութեան ճանապարհը, որ ես կորցրել եմ, և այն ճանապարհով զիմել գէպ առաջ, միշտ առաջ, ինչպէս անում էի գործունէութեանս փառաւոր շրջանում: Կար մի ժամանակ, երբ ես՝ ընկած սար ու ձոր, ինչպէս Դամայանթի, զեղեցկութիւն էի որոնում իմ շուրջը—խորունկ կիրճերում, լեռների բարձունքին, անտառների թաւուտի մէջ, ծովեղբեայ ժայռերի վրայ... Մինչդեռ այժմ—ինչ եմ ես, ասացէք, մի կենդանի դիմակ, ոչնչութիւն, մի չնչին զեռուն, որ գալարւում է ճահճային տղմի մէջ!..

Յի. (Ծածուկ՝ Հոփսիմէին) Հոփիսօ, ի սէր Աստծոյ, Նրան հանգստացրնե, սաստիկ յուզուած է, սրտի արատ ունի...

Հի. Սրտի արատ... Ինչո՞ւ ինձ չուտ չ'ասացիր:

Միթ. Ա՛յս, ինչ ուշ եմ ես խելքի դալիս...

Հի. Ո՛չ, դեռ ուշ չէ: Մի յուզուէք, ինդրեմ. բաւական է, հանգստացէք: Զեր վճիռը վճիռ է: Դուք կը թողնէք ծառայութիւնը հետու...

Միթ. Այն, գրնջը տանի, ես այլս կորրեսպոնդենտ չեմ, ես նկարիչ եմ և կը մեռնեմ՝ վրձինը ձեռիս!

Հի. Այն, բայց նախեառաջ ձեր առողջութիւնը: Կը կադրուուէք—յետոյ դարձեալ կեցցէ գեղարուեսարը:

Միթ. Խսկ նա (ցոյց տալով Ֆլորային) չի կանգնի արդեօք իմ ճանապարհի վրայ, չի ասի արդեօք. «Ինչո՞ւ ես կամենում մեզ փողոց նետել»:

Յի. Երբէք ես այդ չեմ ասի, երգւում եմ Հրանտի արևովը: Թռղ քո կամքը լինի. արա ինչ կ'ուզես: Գնա քո կոչման ետեից: Մենք քեզ մենակ չենք թողնի այլս. մենք քեզ կ'աջակցենք, բոլորս կ'օգնենք՝ թէ ես, թէ քոյրերդ, թէ եղբայրդ: Օրնիբուն կ'աշխատենք, մեղուների փեթակ կը դարձնենք մեր տունը, կարուծե կ'անենք, գասեր կը տանք... մի խօսքով, հոգսերի բոլոր ծանրութիւնը միայն քեզ վրայ չի ընկնի, կը թեթևացընենք քո բեռը...

Միթ. (Ուրախ եւ սաստիկ զգացուած) Օ՛, եթէ այդ խօսքերը ես լսած լինէի քեզնից մի քանի տարի առաջ, ես—փրկուած էի...

Հի. Դուք փրկուած էք, փրկուած էք և այժմ, մի յուսա-

տուէք:

Յի. Հաւատամ, Միքայէլ, որ մենք այսուհետեւ քեզ պիտի փայփայենք, գուրգուրանք, ամեն միջոց, ամեն յարմարութիւն ու կը ստեղծենք քեզ համար, որպէսզի գու հնարաւորութիւն ունենաս քո բոլոր էութեամբ նուիրուել գու սիրած գործին...

Միթ. (Ոգեւորուած է, աչքերը փայլում են): Ուրեմն մենք այսուհետեւ սկսում ենք մի նոր կեանք!.. (Յանկարծ նրա դէմքի վրայ նշաբառում է տանջանք) Եթէ միայն... ուշ չէ արդէն... (Կուրծքը բռնած է. հայացը արտայայտում է սարսափ եւ յուսանատութիւն: Այդ ժամանակ քեմի ետեւ լսում է ծիծաղ եւ աղմուկ) Այս ինչ աղմուկ է դուրսը... (Ֆլորան շոտապում է զրան մօտ:)

Յի. Աղջկերքը ուրախութիւնից գժուել են: Վահանն է եկել, վահանը...

Միթ. Վահան...

Հի. Զեզ վաս էք զգում...

**ՄԻՔ.** (Ցոյց է տալիս, որ օդի պակասութիւն է զգում: ) Օ՛Չ...  
**Օ՛Չ!** (Ընկնում է սրտի պայմանից: )

**Յակ:** (Ասում է, որ առաջ է առաջ) «Ես կատարել եմ առաջին գործը»  
**Ֆլ.** (Ցուսահատ) **Հռիփիսօ,** փրկիր, նաև գնաց: (Լալիս է:)  
**ՀՌ.** (Կայիլով զարկերակը) **Վերջացաւ!** (Աղմուկի վրայ շտապ  
 մտնում է վահանը, յետոյ քոյրերը:)

Stuhl 9.

ՖԼՈՐԱ, ՀՈՒՓՍԻՄԵ, ՎԱՀԱՆ և ՔՈՅՑԲԵՐԸ.

ՎԱՀ. Ի՞նչ է պատահել:  
ՀՅ. Բորբոսնած մթնոլորտի մէջ լոյսը հանգչում է: Սա էլ  
մի լոյս էր, որ հանգաւ: (Ամենօքը լուր արտասում են:)

ՎԱՐԱԳՈՅՐ



3n

«Ազգային գրադարան



NL0350384

41954

891.99

11-27